

901  
U-23

X 19

26


18828

960  
5-232  
46

ՊՐՈՖ. ԷԴՈՒԱՐԴ ՄԱՅԵՐ.

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Պատմա-փիլիսոփայական

Ուսումնասիրութիւն.



1004  
14440

Խմբագրաբեմբ

Գ. Ա. Թ. ՈՒ Ն Ե Ա Ն Ի

Թարգ. ռուս. թ. հրատ.

Գ. ԳԱՐԻԿԵԼԵԱՆ



ՀԱՐԱՀԱՎԱՐ

1912 թ.



## Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ղ Ի Ց

Պատմափիլիսոփայական այս փոքրիկ ուսումնասիրութիւնը բաղկացած է երկու որոշ մասերից. բացասական-քննադատական, որտեղ էդ. Մայերը քննութեան է առնում պատմափիլիսոփայական ուղղութիւններից յատկապէս կ. Համարեխտի այսպէս կոչուած «Նոր պատմագիտական մեթոդը» և այդ մեթոդի նկատմամբ գալիս է բացասական հետեանքների. իսկ երկրորդ մասում շարադրում է իւր երկարամեայ պատմագիտական աշխատանքներից հանած եղրակացութիւնները. ուրիշ խօսքով տալիս է իւր պատմափիլիսոփայութիւնը:

Այս թարգմանութիւնը տպագրութեան յանձնելուց մեզ ամենեին յետ չի պահում այն միտքը, որ այդտեղ արտայայտուած մի քանի մտքերին—յատկապէս քննադատականի մասում—մենք համաձայն չենք. որովհետեւ հաստատ համոզուած ենք, որ պատմականփիլիսոփայական հարցերի լուսաբանութեանը մեծապէս նպաստել կարող է Մայերի այս գիտական լուրջ ուսումնասիրութիւնը։ Տեկստի ծանօթութիւնները, որոնք մեծ մասով վերաբերում էին գերմանական մասնագիտական գրականութեան—մենք յարմար համարեցինք չթարգմանել։ Թարգմանութիւնը մանրամասն համեմատուած է տեկստի հետ, մտքերն ու տերմինները ճշտուած են։

Դ. Ալբունեան.

18 ապրիլի 1912.  
Էջմիածին։

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ելեքտրաշարժ տպարան Մ. Աթոռոյ Ա. էջմիածնի.



I.

Պատմութիւնը սիստեմատիկ գիտութիւն չէ. նրա խնդիրը տեղի ունեցած դէպքերի հետազօտութիւնն ու կենդանի նկարագրութիւնն է: Այդ պատճառով ինչպիսի յատուկ նպատակ էլ որ զնի այս կամ այն պատմաբանը իւր համար, պատմութիւնն երբէք չի կարողանայ հրաժարուել եղակի գործօնների անվերջ բազմազանութիւնից:

Սխալ կլինէր մտածել, իբր թէ պատմական մեթոդի միութիւնը կարող է տալ պատմագիտութեանը սիստեմատիկ ամբողջականութիւն: Այդպէս մտածել կնշանակէ չափազանց մեծացնել այս մեթոդի գերը: Պատմագէտի աշխատանքն ամեն անգամ անմիջական կախման մէջ է գտնուում հէնց նիւթից: Թէ ինչպէս այս կամ այն դէպքում առաջ տանել հետախուզութիւնը և ձեւկերպել հետեանքները, — դրա համար պատմագրութիւնը մշակել է յատուկ եղանակներ և կանոններ, որոնց մենք տալիս ենք ոպատմական մեթոդ՝ ընդհանուր անունը: Բայց մեծ սխալ կլինէր մտածելը, իբր թէ բաւական է միտքը պահել այդ կանոնները պատմաբան լինելու համար, և իբրև թէ պատմական հետազօտութիւն անելը կարելի է սովորել մեթոդաբանութեան պառագրաֆներով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ դա անկարելի է, և այս տեսակէտից պատմութիւնը այլ գիտութիւնների, գեղարուեստների և ընդհանրապէս մարդկային ստեղծագործութեան բո-

լոր արտայայտութիւնների հետ ուսի ընդհանուր վիճակ, նոյն իսկ այնպիսինների հետ, որոնք առաջին հայեացքից թւում են արհեստ: Այս բոլոր շրջաններում ուսուցիչը կարող է միայն զեկավարել աշխատանքը, իսկ աշխատել սովորեցնելը նա չի կարող: Կարելի է իհարկէ փորձառութեան ենթարկուել հմուտ ուսուցչի ձեռքի տակ՝ հետազօտութեան արտատաքին տեխնիկական եղանակի կողմից, բայց ամենապահաւորը—նիւթի մէջ թափանցելը, պատմական պրոբլեմներ դնելը և նրանց վճռել կարողանալը—այդ բոլորը կախուած է բացառապէս հիմախուզողի անհատական ստեղծագործութիւնից: Ուսուցիչը կարող է ցոյց տալ ճանապարհը, հասկացնել աշակերտին որ և է դժուար խնդրի այս կամ այն կերպ ձեակերպելը և վճռելը, ինքը կատարելով այդ աշակերտների առաջ բայց սովորցնել նրանց պատմական աշխատանք ստեղծել, նոյնպէս անկարելի է, ինչպէս անկարելի է սովորցնել յայտնագործնել փիլիսոփայական իդէաներ կամ բնութեան օրէնքներ, կամ սովորցնել մառմառի կտորները դեղարուեստական արտադրութեան փոխել ձայները դարձնել մելոդիաներ, նոյն իսկ, վերջառ պէս, եթէ կամենում էք, համեղ կերակուրներ պատրաստել: Ամեն տեղ տեխնիկայի հետ պէտք է միացած լինի ստեղծագործութիւնը ինքնուրութիւնը կարող է զարթնել արտաքին ներգործութիւնների ճանապարհով, սակայն նրա ներքին էութիւնը բոլորովին անմատչելի է մեր իմացութեան և հանդիսանում է յետագայ անալիգներին այլև չենթարկուող առաջնական գործունը մարդկային բնութեան մէջ:

Նայած այն հանդամանքին, թէ ինչքան բան է ներմուծում այդ անհատական ստեղծագործութիւններին, մենք տարբերում ենք մարդկային գործունէութիւններան արգասիքների մէջ անթիւ գանձարկութեան աշխատական աստիճանաւորումներ: Մարդու գործունէութիւնները կապահանգանակ են առաջարկութեան անհամար աշխատական աստիճանաւորումներ:

Թիւնը և արտադրութիւնն այնքան բարձր է և այնքան աւելի գնահատելի, որքան գծուար է նրանց մի ընդհանուր չափի տակ բերել: Այս կէտք բոլորովին աշխաթող է անում մատերիալիստական տեսութիւնը:

Բայց սկզբից և եթ ահմաներով պատմութիւնը որպէս անմիեն, եղակի, երբեմն տեղի ունեցած ֆակտերի մասին եղած գիտութիւն, մենք սրանով արդէն ըստանեցինք նրան ուրիշ օրյեկտների ուսումնասիրութեամբ զբաղւող մարդկային գիտութեան այլ ճիշերից: Այդպիսով արդէն ինքն ըստ ինցեան հարց է ծագում նրա էութեան և յարաբերութեան մասին դէպի ուրիշ գիտութիւնները:

Երբ պատմաբանը զիմում է այս հարցերի լուսաբանութեան, նա արդէն գուրս է գալիս իւր իրաւասութեան իսկական սահմաններից, ճիշտ այնպէս, ինչպէս գեղարուեստագէտը, որ աշխատում է բացատրել գեղարուեստի ինդիբները և էութիւնը և մարդու վրայ թողած նրա ազդեցութեան պատճառները: Այս բոլորը այնպիսի խնդիրներ են, որոնք մտնում են փիլիսոփայութեան մէջ և նրանց պատասխանը կարող է առ միմիայն փիլիսոփայական ուսումնասիրութիւնը: Ուստի այս խնդիրների մէջ կարելի է լինել ոչ այնքան տեղեակ, բայց չնայած դրան լինել լաւ պատմաբան և ընդհակառակն, ամենապարզ տեսական իմացութիւնները դեռ զբանական չեն այն բանի, որ դրանց իւրացնող մարդը որ և է արքէք ունի որպէս պատմաբան: Կարող է նաև պատահել, որ պատմաբանի դաւանած տեսութեանը չհամապատասխանի իւր իսկ զրած պատմութեանը և որ իւր մեթոդի մասին սխալ հայեացք կազմած լինի: Եւ դա շատ հասկանալի է, որովհետեւ այս երկու խնդիրները վերաբերում են գիտութեան երկու էապէս տարբեր շրջաններին:

Բայց և այնպէս պատմաբանը անհամեմատ աւելի մեծ պահանջ է զգում պարզելու այս խնդիրները, քան

նկարիչը՝ քանդակագործը և բանաստեղծը: Ես ինքս  
մօտ քսան տարի առաջ շօշափել եմ այդ խնդիրները  
իմ «Հին պատմութիւն» աշխատութիւնս Լին հատորի  
ներածութիւն մէջ: և այդ արել եմ ոչ այնքան փիլի-  
սոփայական հետաքրքրութիւնից զրգուած, որը ես դէպի  
նրանց վազուց եմ տածում, որքան զուտ գործնական  
պահանջից՝ բաժանել պատմութիւնը, յատկապէս հնա-  
գոյնը, սկզբունքային սահմաններով ուրիշ՝ նրան աղ-  
գակից գիտութիւններից և ամենից առաջ մարդու մա-  
սին եղած այն ընդհանուր գիտութիւնից, որին իմ  
կարծիքով ամենից լաւ յարմար է գալիս մարդուա-  
նութիւն (անտըռպոլոգիա) անունը, թէս ու-  
րիշները նրան կոչում են հասարակագիտութիւն (սո-  
ցիոլոգիա):

Այն ժամանակ, այսինքն սրանից քսան տարի  
առաջ, այդ պրոբլեմներն ընդհանրապէս գեռ այնպիսի  
հետաքրքրութիւն չէին շարժում, որ նրանք այժմ ու-  
նեն: Բայց այնուհետեւ նրանց նշանակութիւնն աւելի  
աճեց և ամրող տասնամեակի ընթացքում նրանք շատ  
տաք վիճարանութիւնների առարկայ եղան: Յայտնի է,  
նոյն իսկ, որ վերջին ժամանակներս փորձ արուեց  
բարեփոխելու ամրող պատմութիւնը նոր տեսական  
հայեցքով և այդպիսով կառուցանելու նոր պատ-  
մահայեցութիւն, որի կողմնակիցները պնդում  
են, որ միմիայն դա կարող է համարուել իսկապէս  
գիտական և համապատասխանող ժամանակակից գի-  
տութիւն խորաթափանց տուեալներին. մինչդեռ հին  
պատմական զպրոցը նրանք արիսւ են ձգում, յայտա-  
բարելով նրան յետամնաց և ոչ գիտական:

Թէպէտ մանրամասնութիւնների մէջ նոր տեսու-  
թիւնները շատ զօրեղ տարբերւում են միմեանցից,  
բայց նրանց հիմքում կայ մի ընդհանուր միտք, որ  
կազմում է, այսպէս ասած, նրանց բոլորի կորիզը:  
Այս տեսութիւնները փոխ են առնում բնագիտութիւ-

նից գիտութիւն գաղափարի ըմբռնումն և պնդում են,  
որ նախկին պատմահայեցողութիւնները անհամապա-  
տասխան են գիտութիւն հասկացողութիւնը: Սակայն  
դրանից չի հետեւում, որ կամ բնագիտութիւնից փոխ  
առած գիտութիւն ըմբռնումն ճշշտ չէ, կամ շատ նեղ է,  
հետեւապէս և պէտք է բարեփոխուի, ընդարձակուի, և  
կամ թէ պատմութիւնը «գիտութիւն» չէ, որը իսկա-  
պէս պատմաբանի համար միենայն է. նրա համար բա-  
ւական է և այն, որ պատմութիւնը գոյութիւն ունի:  
Բայց նոր տեսութիւնների ներկայացուցիչները բա-  
ցարձակօրէն պնդում են, որ մինչ այժմեան պատ-  
մութիւնը սխալ ճանապարհի վրայ էր, որ պատմու-  
թիւնը, ինչպէս և բոլոր հումանիտար գիտութիւնները  
պէտք է բարեփոխուեն բնական գիտութիւնների փայ-  
լուն օրինակով:

Բոլոր բնական գիտութիւնները, գոնէ տեսակա-  
նապէս, առաջնորդում են օրինաչափութեան  
իդէալով: Բնական գիտութիւնները նպատակ են  
դրել յայտնագործելու խիստ անհրաժեշտ պատ-  
ճառական կապակցութիւնները, որոնք ամեն ժամանակ  
անփոփոխ կրկնում են բոլոր երեսյների մէջ: Նոր տե-  
սութիւնն ներկայացուցիչները պահանջում են նոյնը  
նաև հումանիտար գիտութիւններից, մասնաւորապէս  
պատմութիւնից: Պատմութիւնը նրանց կարծիքով պէտք  
է բաց անէ օրէնքներ, մատնացոյց անի այդ օրէնք-  
ների արտայացութիւնը մասնակի դէպքերում: Այս  
ձևով նոր տեսութիւնները հացցնում են պատմական  
եղակի զործօնները լոկ նիւթերի հասարակ ժողովածուի  
և պահանջում են պատմաբանից, որ նա չսահմանա-  
փակուի միայն հաղորդելով և փաստերի լոկ նկարա-  
գրութեամբ, այլ հետեւյնի նրանցից մարդու պատմա-  
կան կեանքի յաւիտենական օրէնքները, որոնց վերա-  
բերեալ եղակի զործօնները կը ներկայանան լոկ որպէս  
իլլիսորացիաներ:

Այս հայեացքից հետևում է երեք հիմնական դրութիւններ, որոնցով նոր տեսութեան ներկայացուցիչները ցանկանում են զրոյի հաւասարեցնել ամբողջ հին պատմահայեցողութիւնը:

I. Պահանջում են միանգումայն դուրս ձգել պատմական հետազոտութիւնից, կամ իթէ այդ անհնար է իրագործել մեր ժամանակակից գիտութեան սահմաններում, գոնէ հնար եղածին չափ յետ մղել բոլոր անհատական մոմենտները, որոնց նոր պատմահայեցողութիւնները չեն տալիս ոչ մի նշանակութիւն, այս ինչ մինչ այդ նրանց համարում էին պատմութեան պրօցէսի մէջ առաջնակարգ կարևորութիւն ունեցող ֆակտոր:

Այդ անհատական մոմենտները հետևեալներն են.

1. Պատահական ուժի են, — այս խօսքի լայն իմաստով:

2. Աղատ կամք, որ զնում է իրեն համար որոշ նպատակ և աշխատում է համաձայն գրանց ուղղել դէպքերի ընթացքը և նոյն իսկ այն դէպքում, երբ չի հասնում այս կամ այն նպատակներին յամենայն դէպս ակտիւ կերպով աղջում է պատմութեան էվոլյուցիայի վրայ: Աղատ կամքի ճանաչելը, որպէս պատմութեան գործօն մի կողմից և նրան հերքելը միւս կողմից հիմնուած է այն գերի վրայ, որ ունի անհատը պատմութեան մէջ:

3. Իդէան երը, այսինքն հայեացքներն ու մտապատկերները, որոնք իշխում են մարդկանց մտքերի վրայ որոշ շրջանում և ազգում են անանձին անհատների արարքների վրայ:

II. Հակառակ հին դպրոցին, որ առաջնակարգ տեղէր տալիս անհատական կարողութիւններին, նոր տեսութիւնները պատմական նշանակութիւն վերագրում են միայն մասսայական և տիպիկական երևոյթներին, պնդելով, որ մարդկութեան պատմու-

թիւնը պէտք է լինի բացառապէս մարդկային հասարակութիւնների և սոցիալական խմբակցութիւնների պատմութիւն: «Պատմութիւնը որպէս գիտութիւն ունի իւր ուսումնասիրութեան առարկան մարդկային համարակութիւնը և նրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները — ասում է Բարտը» էմպիրիկ պատմութիւնը նման նկարագրական բնական գիտութիւններին, ուսումնանիրում է մարդկային համարակութեան մէջ միայն մտանակին, առանձին կողմերը, մինչդեռ պատմութեան փիլիսոփայութիւնը ուսումնասիրում է նրանց հիմնական ձևերը, «հասարակութեան տիպերը» և «նրանց էվոլյուցիայի օրենքները»:

«Երբ սոցիոլոգիան վերջնականապէս մշակութեան կենթարկուի, — ասում է նոյն հեղինակը, նա կնոյնանայ պատմութեան փիլիսոփայութեան հետ. այս երկու դիսցիպլինները տարբերում են իսկապէս միայն անուշնոյն: Սա ինարկէ բոլորովին հետևողական եղանակացութիւն է. երբ այն պատմութիւնը, որը մենք ճանաչել ենք մինչև այժմ, վերջնականապէս ոչնչացւում է, ի հարկէ, բնական է, որ նրա հետ պէտք է ոչնչանայ նաև այն գիտութիւնը, որը զբաղւում է հէնց պատմութեան էական խնդիրների ուսումնասիրութեամբ, այսինքն պատմութեան փիլիսոփայութիւնը. այս դէպում նրա տեղը պէտք է բռնի մարդաբանութիւնը կամ հասարակագիտութիւնը:»

Թէ ինչպիսի հասարակական խնդիրներով գըլիաւորապէս և նոյն իսկ բացառապէս պէտք է զբաղուի պատմութիւնը, այդ հարցի վերաբերմամբ, ինչպէս յայտնի է, կարծիքները նիստ տարբերում են: Նոր ուղղութեան հետևողներից մեծապնյա մասը մատնացոյց է անում տնտեսական դաշտ ական դաշտ և լուսական գույնի վերաբերմամբ, ինչպէս միակ առարկայ, որի վրայ արծէ պատմաբանների ուղղութիւնը զբաւել գիտութեան ժամ-

մանակակից դրութեան մէջ։ Եւ այս գործօններից հետևում են արդէն սոցիալական կեանքի միւս կողմերը՝ քաղաքական և կրօնական, այն ինչ առաջ նրանց տալիս էին առաջնակարգ տեղ։ Իսկ նոր ուղղութեան պատկանող պատմաբանները, այս բառի նեղ իմաստով՝ ինչպէս օրինակ Համարեխտը, պատմութեան գլխաւոր առարկան համարում են հիմնական սոցիալական միութիւնները ազգութիւնն երը և, նրանց, որպէս մասսաների, զարգացումը։

III. Բայց որովհետեւ մասսաները կազմւում են անհատներից, այդ պատճառով հասկանալի է, որ նոյն իսկ նոր տեսութիւնների ամենամոլեռանդ կողմնակիցներն անգամ առանց անհատների շեն կարող կառավարուել։ Սակայն, եթէ անհատներին նշանակութիւն տալիս են, դրա պատճառն այն է, որ այդ անհատները նոր պատմահայեցողութիւնների մէջ առաջ են գալիս, ոչ թէ այն կողմերով։ որոնցով նրանք հէնց անհատներ են, այսինքն ոչ թէ իրենց ընորոշ, առանձնայատուկ գծերով, ոչ որպէս ինքնուրոյն մեծութիւններ, որոնց ազատ կամքն ակտիւ կերպով որոշում է պատմութեան ընթացքը, այլ միայն որպէս տիպեր, այսինքն որպէս էակներ պայմանաւորուած մասսայական երևոյթներով և սոցիալական էվոլյուցիայի ընդհանուր օրէնքներով, որպէս մէկը՝ պատահականորէն բարձրացած մասսաների ընդհանուր մակերեսոյթից։

Եւ նոր տեսութիւնների ներկայացուցիչները հոգեկան գործօնների նշանակութիւնն, ի հարկէ, բացառել չեն կարող, որովհետեւ այնպիսի պատմութիւնն, որի մէջ փոխանակ ցանկութիւնների, մտքերի և կամքի ակտերի տեղ գեր խաղալ կարողանային ուղղում տեղի ունեցող քիմիական և մեքենայական պրոցեսներ, գեռ գրուած չէ և չի յանդգնիլ գրելու նորաձեռութեան սիրահար պատմաբաններից նոյն իսկ ամենահամարձակը. դրա համար ամենից առաջ պէտք էլ հնարել նոր լի-

զու։ Սակայն նոր տեսութեան կողմնակիցները համարում են կասկածից դուրս, որ բոլոր հոգեկան պրոցեսները արտայայտում են օրինաչափութեամբ, իսկ նրանց հնթարկուող կարեոր նորմաները ձևակերպւում են հոգերանութեամբ։

Այսպիսով այս տեսութիւնների հայեցակէտով՝ պատմութիւնը, ինչ չափով նու ընդհանրապէս ուշադրութեան է առնում անհատներ, ոչ այլ ինչէ, եթէ ոչ գործնական հոգեր են առաջ են առ ու թիւն։ և եթէ նախնակարող է լիովին հասնել իւր նպատակին և դատապարտուած է մշտապէս անկատար մնալու և հետեապէս հոգերանութեան անարժէք իլլիւստրացիա լինելու, այդքուրին առաջանում է լացառապէս այն հանգամանքից, որ մեր ձեռնքի տակ եղած նիւթը, ինչը ել նա հարուստ լինի, երբէք չի կարող տալ մեզ լիակատար, ամբողջական գիտութիւն։

Բայց էապէս առանձին անհատները նոր տեսութեան կողմնակիցների կարծիքով չափազանց քիչ նշանակութիւն ունեն մասսաների հետ համեմատած և այդ պատճառով արժանի չեն գիտական հետազոտութեան օբյեկտ գնանալ։ Պատմութեան իսկական առարկան պէտք է լինի մասսաների հոգերանութիւնը, ոօցի ալ-ոգ եկան գործ ծօնն երը։ «Սոցիալ-հոգեկան էվոլյուցիայի ֆուզիսները», — առնում է Համալրեխտը — հետեւում են մէկ մէկու որոշ կարգով։ Նրանց փոփոխութիւնը պայմանաւորուած չէ ոչ մի մասնաւոր, անհատական մոտիւններով, այլ հետեւանք է ամբողջ ժողովը գիտքի հոգեկան էնէրգիայի անընդհատ զարգացման։ այնպէս որ իւրաքանչիւր ֆազիս ծագում է իւր նախորդից պատճառական անհրաժեշտութեան սիրահար պատմաբաններից նոյն իսկ ամենահամարձակը. դրա համար ամենից առաջ պէտք էլ հնարել նոր լի-

անցքերը, այլ սոցիալ-հոգեկան գործօնները պէտք է հիմք ընդունել ամեն մի ժողովրդի պատմութիւնը շրջանների բաժանելիս: Ինչպէս յայտնի է Լամպեկիստը պնդում է այս ֆազերը գլխաւորապէս գերմանական պատմութեան նկատմամբ, բայց ընդունելով, որ նրանք անփոփոխ կը կնուում են իրաքանչիւր ժողովրդի պատմութեան մէջ, նա հէնց դրանով յաւակնում է բանալու ընդհանրապէս բոլորովին նոր դարագլուխ պատմական գիտութեան մէջ: Նա տարբերում է հետեւալ կուլտուրական դարեցջաններ:

1. Անիմիզմի. 2. Սիմվոլիզմի. 3. Տիպիզմի. 4. Կոնվենցիոնալիզմի. 5. Ինդիւկտուալիզմի. 6. Ժամանակակիցությունի. 7. Կարդիգիզմի դարացջաններ:

Մարդկային հոգու զարգացման այս վեց դարաշրջաններին Լամպեկիստի կարծիքով լիովին համապատասխանում են տնտեսական ալատմութեան հետևեալ շրջանները, համայնական նուաճողական տնտեսութիւն (կոլեկտիւ օկուլպացիա), անհատական նուաճողական տնտեսութիւն (ինդիվիդուալ օկիուլպացիա), համայնական բնաւոն տեսութիւն, (կոլեկտիւ ընաւոն տեսութիւն) ինդիվիդուալ (մասնաւոր) բնաւոն տեսութիւն, կորպորատիւ փողային տնտեսութիւն (գելութե և ցիկներ). Ինդիվիդուալ փողային տնտեսութիւն:

Առաջ այս բանաձեների մէջ են ամփոփում նոր պատմաբանները պատմութեան անվերջ և բազմատեսակ բովանդակութիւնը. և սրա համար նրանք դուրս են ձգում պատմութիւնից կենդանի պատկերները, առաջ քաշելով նրանց տեղը դժգոյն տեսիլներ և անորոշ ընդհանրացումներ:

Բայց եթէ նոյն իսկ այս տերմինները յաջող ընտրուած էլ լինէին, այսինքն եթէ համապատասխանէին աւելի որոշ պատկերացումների, այս դէպքում ևս

մենք շատ քիչ բան կշահէինք: Այս հասկացողութիւնները չափազանց ընդհանուր են և այդ պատմառով երբեք չեն կարող արտայայտել ամբողջ իրական կեանքի բազմաթիւ երևոյթները: Սակայն այդպէս է մեր ժամանակը. նա մի առանձին եռանդով փարում է տերմիններին և մի պարզամիտ ինքնախարէութեամբ կարծում է, որ խօսքերի կուտակումը գիտութեան հաւասարազօր է: Այսպէս օրինակ, մի քանի քաղաքատընտեսներ առանց հանաքի կարծում են, որ իրենց ընական, փողային և վարկային տնտեսութիւն սխեմայով, յաջողուեց արդէն թափանցել պատմական պրոցէսսի գաղոնիքի մէջ և խնդիրը լուծել մի հատիկ բան աձևով: Ամենաին կասկած չկայ, որ մօտիկ պապան կը նծայի: մեղ. դեռ շատ բանաձեներ նման Լամպեկիստի ոգով գրածների, որոնք իրենց հերթին ոչ պակաս լայն ժողովրդականութիւն կվայելեն. և շատ հասկանալի է թէ ինչու, չէ՞ որ դա միշ չափով հեշտացնում է, եթէ միայն բոլորովին աւելնորդ չի դարձնում պատմական վաստի ու երի ուսումնասիրութիւնը: նա միևնույն ժամանակ ներշնչում է նման բանաձեներ իրացրած մարդուն գերազանցութեան զգացումներ շրջապատի նկատմամբ: Ընորագոյն աշխարհայեցողութեանց բարձրութիւնից այդպիսի մարդն արհամարանքով է նայում ցեստ մնացած՝ մտքերին, որոնք դեռ շարունակում են քայլել հարթուած ճանապարհով, անկարելի են համարում երաժարուել փաստերից:

Բայց դժբախտութիւնը հէնց այն է, որ նոյն իսկ նոր պատմաբաններից ամենամոլեռանդներն անգամ պատմութիւն գրելիս չեն կարողանում բաւականանալ այս բանաձեներով, թէպէտ այդ բանաձեները կպցնում են որպէս մակրիններ իրանց գրած պատմութիւնների զանազան բաժանմունքներին. չեն կարող նրանք նաև ահմանափակուել միայն մասսայական երևոյթների նկարագրութեամբ: Այս պատճառով Լամպեկիստի «Գերմանա-

կան ժողովրդի պատմութիւնը» էապէս շատ քիչ բանով է տարբերում իւր նախորդներից: Նիւթը այնտեղ բաժանուած է ըստ զլիաւոր արտաքին դէպքերի: Այդ կարելի է տեսնել հետեւալ զլուխների յիշատակառութիւններից: կուր հառմէացիների հետ, ազգերի գաղթականութիւնը, կարուինդները, Հենրիխ Ս.-ինի պետութեան հիմնուելը, կայսրութեան վերահասատառութիւնը: Այսուհետեւ նիւթը դասաւորուած է նոյն խոկ առանձին կայսրների անունով, որի ընթացքում մանրազին վերլուծութեան է ենթարկում իւրաքանչիւրի մնձնաւորութիւնը: Վերջապէս քաղաքական պատմութեան նուիրուած զլուխներին հետեւում է բոլորովին այնպէս, ինչպէս նախկին պատմական գրուածքներում, պետական կազմին, տնտեսական յարաբերութիւններին, իւրաքանչիւր էպօխայի կուրուրային նուիրուած զլուխները: Եւ չնայած զրան, նոր տեսութիւնները զեռ շարունակում են պնդել իրենցը: Մենք արդէն վերել բերեցինք կամպրեխտի խօսքերը. «առցիտ—հոգեկան էվոլյուցիայի ֆազիսները տիպիկական են և զրա համար էլ նրանք են և ոչ թէ քաղաքական դէպքերը, որ պէտք է հիմք ընդունել իւրաքանչիւր ժողովրդի պատմութիւնը շրջանների բաժանուած էնթամութիւններից: Այսովհետեւ, շարունակում է նաև, սոցիալ-հոգեկան էվոլյուցիայի ֆազիսները պատմութեան մէջ արտայայտում են տիպիկականը, այդ պատճառով ակնյայտնի է, որ նրանք պէտք է ուսումնասիրուեն մասնաւորից, անհատականից առաջ. միայն այն ժամանակ կարելի է այդ անհատականը և եղակին կատարելապէս ուսումնասիրել պատմական օրէն, այսինքն ընդհանուր պատճառ կապակցութեամբ»:

Այս խօսքերի բացարութեան համար կրերիմ

այսուեղ կամպրեխտի զեռ մի քանի հայեացքները, որոնց նշանակութիւնը այն բանի մէջն է, որ նրանք, թէպէտ մի քանի փոփոխութիւններով ընդհանրապէս հիմա մնան, լայնածաւալ ժողովրդականութիւն են վայելում և երբեմն նոյն խոկ համարում են անվիճելի: 1897 թ. կամպրեխտը գրում էր. «Կարող է արդեօք եղակիի ուսումնասիրութիւնը գիտական համարուել, անա սկզբունքային մի խնդիր, որին ես հակառակ հին դպրոցի, բայց գիտութեան դադարի մասին եղած հասկացողութեանը բոլորովին համաձայն պատասխան է ոչ թէ եղակի դէպքերի հետախուզութիւնը և ոչ էլ երեան հանելը երեսյթների ինչ բանով իրարից տարբերուելը, այլ այն, թէ ինչն է նրանց կապակցում միմեանց հետ: Ուրիշ խօսքով գիտութեան նպատակն է առաջ բերել անհամար, բազմաթիւ եղակի փաստեր, որոնց մենք գիտում ենք թէ բնութեան և թէ պատմութեան ընդհանուր հասկացողութիւնների սխառամի մէջ: Գիտութեան այս բնութեամբ նոյնք այն յարմար է պատմութեան ուրաքանչիւր գիտութեան: Ապացոյց այն բանի, որ այսուղի ևս կարելի է մասնաւոր դէպքերը բարձրացնել ընդհանուր հասկացողութիւնների աստիճանին, ծառայում է պատմագիտութեան այն ուղղութիւնը, որ ենում է հետեւալ հայեացքից: տիպիկական երեսյթներն ունեն պատմութեան մէջ անհամեմատ մեծ նշանակութիւն, քան եղակիները, անհատականը. դա պատմագիտութեան նոր ուղղութիւնն է: Նա տեսնում է պատմութեան էսութիւնը և նպատակը ոչ թէ պատմական զարգացման արտաքին կողմերի նկարագրութեան մէջ, այլ էվոլյուցիայի տիպիկական ֆազիսների. վերջների էլ առանձնայատկութիւնը այն է, որ նրանք հանդէս են գալիս պատմութեան մէջ ոչ թէ եղակի օրինակներով, այլ մասսաներով: Միայն ե-



զակի վեստերի լարի ընթափն աղատուած պատմութիւնը կարողէ համարուել զիտական, այս խօսքի խեղական խմասով: Միայն նոր ուղղութիւնն է, որ ապահովում է պատմարանի այն անկախութիւնը, որ բնորոշ է որոշ զարգացման հասած բռնը զիտութիւններին: Երկու տարի առաջ Լամպը եխտի Բելովի դէմ առաջադրած չորս թեղիսներից երկրորդը և երրորդը ասում էն:

2. «Գիտական մտածողութիւնը, որպէս ընդհանուրապէս մտածողութիւնն մի մասնաւոր տեսակը, պէտք է ուղղուած լինի բացառապէս գէպի ընդհանուրը, տիպի կականը: Այս պահանջը հաւասարապէս պէտք է տարածել թէ ընական և թէ հումանիտար զիտութիւնների վրայ: Այստեղից հատկում է, որ կուլտուրական պատմութիւնը, ինչ չափով որ նա զբաղւում է տիպիկական երկոյթների ուսումնասիրութեամբ, պէտք է դառնայ ճիմն ական պատմական դիսցիպլին»:

3. «Եղակին, անհատականը մատչելի է միայն գեղարուեստական պատկերացման, ուստի պատմագիտութեան համար նա կարողէ ունենալ միայն երկրորդական նշանակութիւն»:

Վերջապէս առարկելով իդէաների Աստուածային գերփորձնական (трансцендент) ծագման ուսումունքի դէմ, որ Լամպիկսարի կամայական կարծիքի համաձայն իրը թէ քարոզում է Ռանկէն, նա գրում է. «Կուլտուրապատմական մեթոդը ելակէտ ունի այն հասկացողութիւնը, որ պատմական դէպքերը պատճառի և հետեանքի մի անընդհատ շղթայ են կազմում: Հէնց գրանով նա ընդունում է բացարձակ պատճառական կանոնը հոգիկան կահնքի շընանի մէջ: Այդ ենթադրութեան օրինականութեան մասին կասկած անգամ լինել չի կարող. իւր խնդիրներին լրջութեամբ վի-

լարերուղ գիտութիւնը ներկայումս անմատելի է առանց խիստ պատճառականութեան սկզբունքների: Պարզ է ինարկէ, որ պատմաբաններին բազմաթիւ անդամ առաջադրած այդ պահանջը՝ պատմութիւնն ընդունել որպէս օրինաչափ մի պըոցէսս, որը ներկայանար պատճառի և հետեանքի մի անխախտելի շղթայ, ուղղուած է աղատ կամքի և պատահականութեան դէմ—պատմութեան մէջ: Այս երկու հասկացութիւնները նոր անսութեան կողմնակիցների կարծիքով գտնուում են անհաշտ հակասութեան մէջ պատճառականութեան հետ, ուստի որպէս ոչ ըանական տարրեր գուրս լինելով ամեն մի օրինաչափութիւնից, չպէտք է հանդէս գան պատմական փաստերի բացարութեան ժամանակ:

Բայց ինչ էլ որ ասելու լինեն նոր անսութեան կողմնակիցները, աղատ կամքն ու պատահ ականութիւնը անկասկած մարդկային կեանքում հետեապէս և պատմութեան մէջ խաղում են ահազին դեր: Որ ես գրում եմ այս գիրքը, այդ իմ աղատ կամքի հետեանքն է, իսկ որ ընթերցողը կարգում է, ոտ ամբողջովին կախուած է նրա աղատ կամքից: Որ անձրի եկաւ, կամ ընդհակառակն արել լուսաւորեց, երբ ես դուրս եկայ տանից և կամ իմ գրպահում կար որոշ թւով փող և յատկապէս այս և ոչ այն գրամմները, ըուլոր սրանք պատահականութեան արդիւնը են:

Սակայն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս բոլոր փաստերը ունեն միաժամանակ և իրենց պատճառները: Որ մենք ամեն մի երկոյթի վրայ նայում ենք որպէս որ և է պատճառի հետեանք, այդ մեր մտածողութեան անհրաժեշտ օրէնքն է, որը զիշել չի կարող ոչ մի մարդ, և մեզ թւում է, որ մենք անտես ենք առնում այդ օրէնքը միայն այն ժամանակ, երբ երկոյթները իրենց բացարձակնախապատճառին, Աստծուն ենք վերագրում, որին մտածում ենք ամեն մի

պատճառականութիւնից գուրս: Կարելի է արդեօք սրանից յեւայ պատահականութիւնը կամ ազատ կամքը, սրոնք ինչպէս յայտնի են փորձից, անկասկած գոյութիւն ունին աշխարհում, չենթարկուեն պատճառականութեան օրէնքին, այլ ժխտէին նրան:

Եթէ լաւ մատճելու լինենք այդ խնդրի մասին, երևան կդայ, և դրա մէջ է ամբողջ արմատը սովորական թիւրիմացութեան, որ ազատ կամքի և պատճառականութեան, պատահականութեան և անհրաժեշտութեան հակասութիւնը ոչ թէ իրենց երևոյթների մէջ են գտնուում, այլ տարբեր տեսակէտների մէջ, որոնցով մենք մօտենում ենք իրերին և մեր մաքի յատկութիւններով չենք կարող չմօտենալ տուարկաներին ինչ-քան էլ որ մենք հակասակ լինէինք դրան:

Բոլորը, ինչ որ եզել է և գոյութիւն ունի, հէնց այդ պատճառով մեզ անհրաժեշտ է երեսում. թէ մարդու որ և է վճիռը, հէնց որ նրա միտքը այդ վճուի վրայ կանգ է առնուում և վերջնականապէս ձևակերպւում, թէ որ և է զգայութիւնը, միենայն է երևան է եկել նա արտաքին ազդեցութեան առաջացել է ինքնարերարար, բոլոր այդ երեսոյթները մենք համարում ենք անհ ը աժել շատ, որովհետեւ նրանք պարփակուած են պատճառի և հետեւանքի անխախտելի կապակցութեան մէջ: Այս դէպքում բոլորովին անտարբեր կինի, թէ արդեօք մենք մատերիալիստորէն կը բացադրենք դա և կամ կգանենք վերջապէս հաշտեցուցիչ մի բացատրութիւն: Նոյնքան անկարեւը է, թէ արդեօք մենք դրանց պատճառները կարող ենք որոշել թէ ոչ. յամենայն դէպս անպայման հաւատացած ենք, որ դրանք են պատճառները:

Բայց բոլորովին այլ են թւում մեզ երեսոյթները, երբ մենք նայում ենք նրանց վրայ, ոչ թէ իրեն կատարած գործողութիւնների, այլ միմիայն կատարած գործողութիւնը, մենք նայում պատճառները կարող ենք որոշել թէ ոչ. յամենայն դէպս անպայման հաւատացած ենք, որ

նականապէս որոշ չէ, մենք այդ հետևանքը անհրաժեշտ չենք համարում: Մենք այստեղ զործ ունենք բազմաթիւ հնարյաց ուրութիւնների հետ և թէ որը դրանցից իրականութիւն կդառնայ, այդ կախուած է ազատ կամքից, որը կշռադատում է տարբեր շարժափթաները, զնում է իւր համար որոշակի նպատակներ և գործում է համապատասխան դրանց: Ճիշտ է որ այդ կամքը իւր հերթին կախուած է թէ սուբյէկտի հոգեկան անհատականութիւնից և թէ արտաքին հանգամանքներից: մոտիւների կշռադատելը իսկապէս ոչ այլ ինչ է եթէ ոչ այն՝ որ գիտակցութիւնը մինչ այն ժամանակ է քննում զանազան հնարաւորութիւնները, մինչև որ գտնի ժիսկական, այսինքն քիչ թէ շատ նպատակայարմար որոշումն, որի վրայ էլ այս պատճառով նպատակին համենելու համար վերջնականապէս կանգ է առնում: (Թէպէտ ուրիշ դէպքերում թոյլ և երբեմն էլ ընդհակառակն ուժեղ կամքը երբէք չի դիմում կշռադատութեան, այլ ուղղակի ենթարկում է որոշ իմպուլսի): Այդ պատճառով նա, ով ճանաչում է որ և է անհատի բնաւորութիւնը և այն պայմանները, որոնց մէջ նա ապրում է կարող է մեծ հաւանականութեամբ նախադաշտակել նրա արարմունքները: Բայց և այնպէս քանի որ այդ արարմունքները չեն տրտայայտուել, չեն կարող համարուել անհրաժեշտ: Ես ցցանկանում եմ այս դէպս մարդկային արարմունքների մերձաւոր պատճառից, մենք չենք կարող հրաժարուել նրանց վերլուծութեան ժամանակ և մեր ձևակերպութիւններից կարելի չենք կարելի բացարձակօրէն պնդել, որ այն կամ այն անհատը չէր կարող վարուել այլ կերպ: Իսկապէս հէնց այդ հանգամանքն է, որ մեզ հնարաւորութիւն է տարիս ազդելու ուրիշ մարդկանց կամքի վրայ:

Երբ ես վճռում եմ այս մոմենտում տանից գուրս գալու խնդիրը, այդ դէպքում իմ վերջնական վճիռը

կարող է պայմանաւորուած լինել որոշ արամագրուած թեամբ, կամ բարեկամի խնդիրով. ևս կարող եմ նոյն պէս, այս խնդրի որոշումը թողնել բախտի բերմունքին, յետոյ իմ վրայ կարող է ազդել եղանակի որպիս սութիւնը, վերջապէս ևս կարող եմ առաջնորդուել հետեւալ ենթադրութիւններով. վերջացնեմ արդիօք անյետաձգելի աշխատանքս թէ առժամանակ թողնեմ: Այս պատճառները, որոնք վերջնականապէս կը որոշեն իմ այս կամ այն վճիռը, կարելի է յետոյ անսահմանօրէն շատացնել, եթէ իհարեկէ որ և է պատճառով դա կարենոր կը դատուի: Կարելի է նրանց վնարել իմ հոգեկան յատկութիւնների մէջ, երբ ևս դեռ մանուկ էի, և նոյն իսկ դրանից էլ առաջ իմ նախորդներից սրա կամ նրա ընաւորութեան մէջ, ինչքան թոյլ կտան այդ միջոցները: Սակայն դա բոլորովին չէր հակասիլ այն հանգամանքին, որ իմ վճիռը որպէս այդպիսին, էապէս ազատ էր, որ նա ամբողջապէս կախուած էր իմ կամքից, իմ դրած նպատակից, նրանից, թէ ինչ շարժառիթների ևս տուեցի առաջնակարգութիւնը: Ներքին փորձի այս փաստից չի կարող հրաժարուել և ոչ մի մարդ: Նոյն իսկ ամենամոլեստնութ գետերմինիստն անգամ: Այս պատճառով կեանքի մէջ մենք համարում ենք մեր սեփական և բոլոր մարդկային գործողութիւնների պատճառը կամքը, որը թէպէտ և որոշում է զանազան շարժառիթներով, հոգեկան նախադրեալներով, արտաքին ազդեցութիւններով, բայց և այնպէս ազատ է մնում իւր որոշումների մէջ: Եւ հէնց նրա համար, որ մենք լինելով միևնոյն ժամանակ արտաքին պայմաններից կախման մէջ, ամեն բուպէ սեփական փորձով զգում ենք, որ ազատ ենք մեր վարմունքների մէջ, մենք նրանց վոխարէն պատասխանառու ենք համարում մեզ և ոչ այն անվերջ պատճառների շարքը, որի մասին հէնց նոր խօսք եղաւէ Սրանով արդէն առաջ է քաշում, որպէս կեանքի անդրաժեշտ գործօն: իսկական անհատական սկզբունք-

ները, որը չի կարելի ընդհանուր ձևերի մէջ ամփոփել: Սակայն ինչ որ իրաւացի է ամենօրեայ կեանքի: Նկատմամբ, հաւասար կերպով իրաւացի է նաև պատմական պրոցէսսի վերաբերմամբ, որպիհետև վերջինս ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի էջ մարդկային կեանքից: Երբ կար կանգ առնել այն խնդրի վրայ, թէ ինչ նշանակութիւն ունի նշանաւութիւնը ունի անաձնաւութիւնը ունի նշանակած իր ի կամքը պատճառութեան մէջ, ևս միանգամայն աւելնորդ եմ համարում: գա, ըստիս, անկնյայտնի ճշշմարտութիւն է: Երկրորդ Պունիկեան պատերազմը Հանիրալի վճուի հեաւեանք է: եօթնամիայ պատերազմը Յրիդրիխ Մեծի, 1866 թ. պատերազմը՝ Բիամարկի: Բոլոր այս մարդկել կարող էին կանգ առնել նաև մի ուրիշ որոշման վրայ, ուրիշները նրանց տեղը լինելով այլ կերպ կորոշէին վարուել, իսկ դրա հետևանքը կինքը այն, որ պատճական գէպքերը այլ ընթացք կունենային:

Մենք աշխատում ենք ըստ կարելոյն որոշել այն շարժառիթները, որոնցով այդ մարդիկ առաջնորդուել են իրենց վճիռների մէջ և այդ շարժառիթների վրայ հիմունած զնահատում ենք թէ այդ վճիռները և թէ մարդկանց: Սակայն գլխաւոր դերը գէպքերի ընթացքում խաղում են ոչ թէ մոտիւնները, այլ կատարուած վճ իւն երը և նրանցից անբաժան ոգու այն ոյժերը, որոնցով այդ մարդիկ յաղթահարում են իրենց ճանապարհին ընկած բոլոր խոչընդոտներին, ստորագրելով վերջիններիս իրենց կամքին: Որտեղից է նրանց այս և ոչ թէ ուրիշ որոշման բերող ոյժը և ընաւորութիւնը, այդ մասին մենք երբէք չենք հարցուիլ նոյն իսկ այն գէպքում, երբ գոյութիւն ունենար այնպիսի գիտութիւն, որը գիւրութիւն տար նման ինդիրներին պատասխանելու: Զէ որ մենք չենք հարցում Հանիրալի արշաւանքների մասին պատմելիս Ալպեան լեռներով, թէ ինչպէս է գոյացել այս լեռնաշղթան

և թէ ինչպէս է նա ստացել յատկապէս այդ և ոչ այլ ձեզ. մեղ համար բաւական է և այն, որ նա գոյութիւն ունի. ճիշտ այդպէս էլ հէնց նոր յիշած դէպքում, այսինքն այս կամ այն պատմական գործի անհատականութիւնը հաստատելուց այն կողմը մենք չենք անցնում:

Անցնենք պատահականութիւնը և անհրաժեշտութիւնը ոչ թէ իրերի յատկութիւններն են, այլ ինչպէս և պատճառականութիւնը նրանք լոկ կատեզորիաներն են, որոնց տակ մենք դատաւորում ենք երեսյթները: Նման այն բանին, ինչպէս զգայական կեանքի իւրաքանչիւր օրյէկտը հանդիսանում է միաժամանակ իրրե պատճառ և հետեանք, որը կախուած է այն հայեցակէտից, որով մենք նայում ենք նրանց վրայ, բոլորովին նոյն եղանակով և իւրաքանչիւր երեսյթ թւում է մեղ միաժամանակ անհրաժեշտ և պատահական: Նա թւում է մեղ անհրաժեշտ և պատճառական շարքի կապակցութեան մէջ, որի մի օդակը հէնց նա ինքն է. և նա թւում է մեղ պատահական, երբ մենք նայում ենք նրան ուրիշ պատճառական շղթայի տեսակէտով, որի հետ նա հանդիպում է միայն տարածութեան և ժամանակի մէջ և որի վրայ, շնորհիւրը անում է իւր ազգեցութիւնը: Որովհետև վերջինիս չի կարելի գուրս բերել երկրորդ պատճառական կարգի պայմաններից, որովհետև դա հետեանք է արտաքին ազգեցութեան, զբա համար պատճառների և հետեանքի օրինաչափ յարաքերութիւնը պատճառական երկրորդ շղթայի մէջ խախուում են պատահելով առաջին պատճառական շղթային: Երկրորդ պատճառական շղթայի միայն ուրիշներում ուրիշներում պատճառական կամ անդիպում ուրիշներում պատճառական կամ անդիպում է: Որ մի որ և է գիծ շարունակելով մինչև որոշ տարածութիւն պէտք է անցնեն որոշ կէտով, դա հետեւում է տուեալ գծի յատկութիւնից, բայց որ այդ կէտում նա պէտք է

հատուի ուրիշ գծի հետ, այդ նրա յատկութիւնից բոլորովին չի հետեւում, թէպէտ և երկրորդ գիծը անպատճառ պէտք է անցնի միենոյն կէտով: Եւ այսպէս մի երեսյթ երբ կոչում ենք պատահական, մենք դրանով դեռ չենք բացառում նրա կարեւորութիւնը և պատճառական պայմանականութիւնը. մենք միայն գրանով ցանկանում ենք ասել, որ նրա ազգեցութիւնը ուրիշ պատճառական շղթայի վրայ չի կարելի որպէս պատճառ դուրս բերել այդ առաջին կարգի պայմաններից:

Որովհետև կեանքն այսպիսի պատճառական անհամար շղթաներից է կազմուած, դրա համար կեանքի բոլոր գէպքերը միաժամանակ թէ անհրաժեշտ են և թէ պատճառական: Վերցնենք ծանօթ մի գէպք, որոշ մոմենտում կտուրից վայր է ընկնում աղիւար: Այս պարագան մի կողմից պայմանաւորուած է կտուրի վատ կազմութեամբ, իսկ միւս կողմից արտաքին աղղեցութիւններից (օր. քամին) հետեապէս աղիւար վայր ընկնելով պատճառականորէն պայմանաւորուած է և անհրաժեշտ է, ինչպէս և անհրաժեշտութիւն է այն, որ ընկնելով մարդու վրայ աղիւար պէտք է նրան ցաւ պատճառի: Այդպէս էլ որոշ պատճառով պայմանաւորուած է և դրա համար էլ անհրաժեշտ է մի ուրիշ հանգամանք, (թէպէտ հանդիսանում է միաժամանակ ազատ վճռի արդիւնք) այն, որ ընկած աղիւար տակով և յատկապէս նրա ընկնելու վայրկեանին անցնում է այս ինչ մարդը: Բայց այս երկու հանգամանքների միաժամանակ հանդիպելով պատճառական է, որովհետև մի շարք պատճառներից, որոնցով պայմանաւորուած է աղիւար վայր ընկնելը, չի հետեւում այն բանը, որ աղիւար պէտք է ընկնէր յատկապէս այդ մարդու վրայ, նոյնպէս մի շարք պատճառներով պայմանաւորուած լինելով մարդու անց կենալը, ամենաին չի հետեւում, որ այդ մարդն անպատճառ զոհ պէտք է զնար

աղիւսին, վէրք ստանար և մեռնէր, որովհետեւ նրանցնելը փողոցով աղիւսի վայր ընկնելու հետ ոչ մի կապ չունի, մէջտեղ կայ միայն հնարաւորութիւն և այդ հնարաւորութիւնը դառնում է իրականութիւն շնորհիւ միայն այն հանգամանքի, որ երկու անկախ պատճառական շղթաներ կտրում են իրար տարածութեան տուեալ կէտում, ժամանակի միջնոյն մոմենտում:

Բայց մենք կարող ենք այդ խնդրին նայել լայն տեսակէտով, միացնելով մի քանի պատճառների շարքը մի ամբողջութեան մէջ. այն ժամանակ ի հարկէ, նրանց հանգիպումն մեզ կարեոր է թւում, որովհետեւ այս դէպքում նրանք կազմում են մի սիստեմ, որի յակութիւնից կրղիսի այն, որ առանձին գծերը պէտք է հատուեն տարածութեան որոշ կէտում, ժամանակի որոշ մոմենտում: Եւ այս ճանապարհով մենք կարող ենք, վերջապէս, դիտել աշխարհում տեղի ունեցող ըուլոր երկոյթները որպէս մի ամբողջութիւն և այդ պատճառով էլ անհրաժեշտ: Բայց հէնց այս տեսակէտն ունենալով էլ մենք չենք կարող պատահականութիւնից ազատ մնալ: Այս դէպքում անհատականութիւնը ենթարկում ենք ընդհանուր սիստեմի. և այն, որ եղակի երևոյթի մէջ անալիղի ժամանակ թւում է մեզ պատահական, ամբողջութեան տեսակէտից ներկայանում է խիստ անհրաժեշտ: Բայց այդ անհրաժեշտութիւնը կարող է լինել միմիայն նրանում, որ հիմա բոլոր առածին գծերը կը կազմեն մի սիստեմ, որի յատկութիւններն այնպէս են, որ բոլոր այդ գծերը կհատուեն տարածութեան որոշ կէտում: Ժամանակի որոշ մոմենտում: Իրականութեան մէջ սակայն, շնորհիւ այդ բանի, որոշ պատճառական բացատրութեան մէջ եղած կապակցութիւնը երբէք չի նկատում: Միութիւնը և անհրաժեշտութիւնը մեր մտածողութեան պոստուլատ առ երն են լոկ, մինչդեռ աշխարհում դրանց հակառակ թագաւորում է միշտ պատահականութիւնը:

Յաճախ լսում ենք, իբր թէ մենք խօսում ենք պատպհականութեան մասին միայն նրա համար, որովհետեւ մեզ մտածելի չէ երկոյթների լրեւ կապակցութիւնը և եթէ մենք ամբողջապէս գիտենայինք նրանց փոխյարաբերութիւնը: այն ժամանակ պատահականութեան տեղ չէր լինի և կը մնար միայն անհրաժեշտութիւնը: Սա կոպիտ մոլորութիւն է: Պատահականութիւնն երբէք չի վերանալ, որովհետեւ նա հանդիսանում է մեր մտքի համար նոյնպիսի մի պարտաւորիչ կատեգորիա եղակի երևոյթները անալիգի ենթարկելին, ինչպիսի անհրաժեշտութիւն ներկայանում է ընդհանուր սիստեմի նկատմամբ: Բացատրենք այդ մի օրինակով: ինչքան էլ շարունակենք, թէկուզ անվերջ, մի կողմից աղիւսի ընկնելը միւս կողմից նրա տակով անցնող մարդու քայլերը պայմանաւորող պատճառների շարքը, մենք չենք կարող վերջնականապէս բացատրել այս կամ այն պատճառների կապակցութիւնը: Մարդու աղիւսով վիրաւորուելու անհրաժեշտութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր մտածողութեան երկու պատճառական շղթան մի սիստեմի մէջ գնելու հետեանք, որի յատկութիւնով երկու գծերը պէտի հատուեն տուեալ կէտում:

Այս պատճառով պատահականութիւնը այն շըրջանն է, որ բոլոր ժամանակներում ծայր է տուել ընդհանրապէս համաշխարհային երկոյթների և մասնակուրապէս մարդու կեանքին միստիկական միկնութեան: Մարդկային միտքը պատճառական բացատրութեան իւր պահանջով չի կարող բաւարարուել նրանով, որ որ և է դէպքի առաջ դալը կախուած է երկու գծերի միայն ուղղութիւնից և ոչ նրանց յատկութիւնից: այդ պատճառով նա բացատրութիւն է փնտրում արանսցենդենտ պատճառի, Գերագոյն էակի կամքի մէջ:

Այն էլ պէտք է նկատել, որ Աստուածային նա-

խախնամութեամբ բացատրում են սուորաբար մարդկային ամենակարևոր գէպքերը, մինչդեռ աննշան դէպւ քերը նոյն իսկ այդպիսի բացատրութեան ժամանակ շարունակում են նկատուել որպէս պատահականութիւն։ Մարդու կհնական աշխարհայեացքի համար ինարկէ, շատ էական է, կը կանգնի նա արդիօք այս կամ այն տեսակէտի վրայ, բայց պատմար անի է ամար բոլորպին միենոյն է թէ արդիօք նա ո՞ր և է դէպքում պատահականութիւն, բախտ, թէ Աստծու նախախնամութիւն, ռԱստծու մատը, կտեսնի, միայն թէ պատմաբանը չիրաժարուի փաստերից և նրանց շմտցնի որ և է մետաֆիզիկ սիստեմի մէջ, այլ խիստ տարրերի պատմական իմացութիւնը կրօնական աշխարհայեցողութիւնից։ Ամենից պարզ կերպով նկատելի է դա Ռան է ի օրինակով. մնալով հաւատացեալ քրիստոնեայ, նա երբէք չի փորձում սակայն պատմութիւնը Աստուածաբանօրէն բացատրելու, պատմութեան վրայ չի նայում, որպէս Աստուածային ծրագրի իրագործման վրայ։

Ինչ էլ որ առարկելու լինեն ինձ «բացարձակ պատճառականութեան» մեթոդի կողմանկիցները, բայց ես դրականապէս պնդում եմ, որ պատահականութեան վերացումը կարող է դնուել միայն պատահական երևոյթների արանց ենդեմ բացարձութեան գնով։ Եւ եթէ որ և է հայեացք տանում է անխուսափելիօրէն դուալիզմի, դա իսկապէս սբացարձակ պատճառականութեան» մեթոդն է, ոչ հականակը։

Երևոյթների աշխարհում առաջ եկած պրոցէս սան երի մասին մեր ասածը իւր լիակատար ոյժը պահում է փորձի առարկաների վերաբերմամբ նաև այն դէպքում, երբ մենք ուսումնասիրում ենք ոչ թէ նրանց մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները, այլ նայում մէջ նրանց վրայ որպէս լիապէս որոշուած և արդէն կազմակերպուած իրերի։ Ոյս տեսակէտից օրի-

նաչափ են թւում մեզ նրանց նշաններից նրանք, որոնք բղխում են այն ընդհանուր գաղափարից որի տակ մենք մտցնում ենք այդ առարկաները, իսկ մնացած նշանները, որոնք յատուկ են նաև այլ, ուրիշ առարկանների և որոնք չեն մտնում տուեալ ընդհանուր սահմանների մէջ, մենք համարում ենք պատահական, եթէ մենք նայում ենք ծառի վրայ, միայն լոկ որպէս կաղնու, այդ դէպքում նրա տերմաների և ճիւղերի քանակը, իւր աքանչիւր տերեկի ձեր և առանձնակի ի թւում են մեզ պատահական, որովհետեւ իւրաքանչիւր առանձին տերեկը կարող էր ունենալ ուրիշ ձեւ, կամ կարող էր բոլորովին բացակայել, որից ինարկէ ինքը ծառը չէր դադարիլ կաղնի լինելուց։ Բայց երբ մենք դիմում ենք նրա հասակի և զարգացման ուսումնասիրութեանը որոշ պայմանների մէջ այդ դէպքում իւրաքանչիւր տերեկի իւր տեղում գտնուելը և նրա անհատական մեծութիւնը թւում է մեզ օրինաչափ և անհրաժեշտ։ Սակայն նոյն իսկ այս տեսակէտից էլ դեռ պատահական է մնում օրինակ, այն հանգամանքը, որ մի, տերեկ միջատների կեր է եղել իսկ միւսը կտրուել է մարդու ձեռքով, թէպէտ այս երեսոյթները որպէս պատճառական շղթայի օղակներ և հետեւանքներ միենոյն ժամանակ անհրաժեշտ են։

Խնդիրը բոլորովին չի փոխում իրերի նկատմամբ նաև գործնական տեսակէտից. իրերի բոլոր յատկութիւնները, որոնք նշանակութիւն չունեն, գործադրուղ նպատակի համար, մենք քննում ենք որպէս պատահական երևոյթի։ Եթէ ես, օրինակ, քարը գործադրում եմ շինութեան համար, այդ դէպքում նրա բոլոր յատկութիւնները բացի նրանցից, որոնք պահանջում են շինութեան համար, ես համարում եմ պատճառական, որովհետեւ նրանք ինձ համար կարևոր չեն և քարի ընտրութեան դէպքում եմ նշանակութիւն չեմ տալիս նրանց։ Եթէ ես դնում եմ գրպանս անհրաժեշտ

քանակութեամբ փող պարտքս վճարելու համար, այն ժամանակ միանգամայն պատահական կլինի այն հանգամանքը, որ դրամներից մէկը լինի Բաղենի միւսը Սաքսոնիայի, որ մէկը կը հանի խուլ ձայն, միւսը կեղծ և այլն։ Այդ բոլորը ուշադրութիւն կդրաւի թէ չէ, այդ նոյնպէս կախուած է պատահականութիւնից։ կտանարդեօք այդ հանգամանքը որ և է նշանակութիւն և կունհեայ լուրջ հետևանքներ, (օրինակ կեղծ դրամը կարող է պատրուակ լինել նրա տիրոջը մեզագրելու) այս բոլորը պատահականութեան գործեր են։

Այսպէս պատահականութիւնը թագաւորում է աշխարհի բոլոր երկոյթների մէջ, թէպէտամիւս տեսագէտից կեանքում առաջացած բոլոր երկոյթները միենոյն ժամանակ և անհրաժեշտ են։ Այս երկու կատեգորիաներից որի տակ գնել այս կամ այն երկոյթը, դա ամեն անգամ կախուած է այն բանից թէ ինչպիսի կապակցութեան մէջ ենք վերցնում այդ երկոյթները։ Այդ պատճառով պատմութեան մէջ ևս պատահականութիւնը չափազանց մեծ գեր է խաղում։ Բոլոր վերև թուածներից յետոյ այդ ճշմարտութիւնը ըստ երկոյթին ապացոյցի կարիք չէր զգալ. բայց ի նկատի ունենալով որ շարունակ նորանոր փորձեր են արւում սահմանափակելու պատահականութեան նշանակութիւնը պատմութեան մէջ և կամ միանգամայն զերոյի հաւասարեցնելու, ասածներս ապացուցանելու համար աւելուդ չէր լինի մի քանի օրինակ բերել։ Որ Վիլհէլմ Անի և Բիսմարկի գէմ եղած մահափորձերը չը յաջողուցցին, իսկ Փիլիպոս Մակեդոնացու, կեսարի, Ազգեքսանդր Բ. կայսեր գէմ մահափորձերը օրհասական վախճանի հանգան, պատահականութեան գործ էր դա. բոլորովին պատահական է և այն, որ Գուստավ Ադրլֆը սպանուեց Լիւցենի մօտ, մինչդեռ միւս զօրավարները, որոնք միատեսակ վանդաբերի ենթակայ էին պատերազմների ժամանակ, աղատուեցին այդ վիճակից։ Որ Սղեր-

անդը Մեծը և Ֆրիդրիխ Գ. կայսրը մեռան ծաղիկ հասակում, որ Հարսուրգիան տան երկու ճիւղերումն էլ արագոլէն մեռան տղամարդկանց շառափղները, որ նորածին, կիսամեռ Գէոթէին հազիւ յաջողուեց վերագարձնել գէպ կեանք, որ Ռաֆայէլը և Շիլէրը մեռան գարուն հասակում, մինչդեռ Միքէլ Անջելոն և Գէոթէն հասան ալեգրադ ծերութեան, որ Հոհենցոլերների հարստութիւնը ոչ միայն վերածնուեց Բուրբոնների, Վետինների և մի քանի ուրիշ հարստութիւնների նման, այլ և առաջ բերեց յանձին Ֆրիդրիխ Վիլհէլմ Ա-ի եռանդուն մի թագաւոր, լցուած իւր նպատակների պայծառ գիտակցութեամբ, իսկ յանձին Ֆրիդրիխ Մեծի մի հանճար—սրանք բոլորը պատահականութիւններ են, որոնք ինչպէս և հազարաւոր այդպիսի պատման ու թիւններ, ունեցել են պատմութեան ընթացքի վրայ հսկայական ազդեցութիւն որը երբէք տեղական և վաղանցուկ չէ, այլ շարունակում է արտայայտուել ամրոջ դարերի և հազարամեակների ընթացքում։

Ով չի ցանկանում նման փաստերին առաջնակարգ տեղ տալ պատմական կեանքում, ով ցանկանում է պատմութիւնից զուրս ձգել կամքի պատութիւնը և պատահականութիւնը, կամ նրանց աղդեցութիւնը համարել չնչին, նա ոչ միայն սպառնում է ոչնչացնել պատմութեան բովանդակութեան ամբողջ հարստութիւնը, որը կազմում է պատմական ինտերեսի գլխաւոր առարկան, այլ իսկապէս ամրոջ պատմութիւնը զրոյի է հաւասարացնում, փոխարինելով նրան վերացական բան ու ձեռն ու գրկուած ամեն տեսակ կոնկրէտ բովանդակութիւնից։ (ինչպիսիք են օրինակ՝ տիպիզմ և ինդիվիդուալիզմ, բնատնտեսութիւններ փողային անտեսութիւն, գոյութեան կոիւ և դասակարգային կոիւ և այլն)։ Բայց պատմութիւնը հետաքրքրում է ուղղակի հենց կոնկրէտ իրողութեանը պատմականութեան մասին պատմութիւնը և այլն։

դութիւններով։ Նա երբէք գործ չունի բնական գիտութիւնների նման ջրի և օղի հետ ընդհանրապէս և չի ուսումնասիրում նրանց կառավարող օրէնքները, այլ եթէ կարելի է այսպէս ասել, ուսումնասիրում է այս կրոնկրէս, եզակի ջրի բաժակը և կամ այս բոցը իւր անհատական յատկութիւններով և իւր յարարերութիւնով դէպի այն միջավայրը, որի մէջ նա պատահ առ ընկել է։ Շատ տարածուած է հետեւեալ հայեացքը թէպէտ գոյութիւն ունին պատմական օրէնքներ, սակայն մենք շատ հազուագիւտ դէպքերում կարող ենք, իսկ երբեմն էլ անկարող ենք, բացատրել նրանց։ Այս առաջ է գալիս, բացառապէս իրը թէնրանից, որ 1) մեր պատմական նիւթը տնքաւար առ է. 2) մենք չենք կարող մեկուսացնել պատմական փաստերը 3) մենք զրկուած ենք հնարաւորութիւնից արհեստականորէն առաջ բերելու պատմական փաստեր գիտական փորձի նպատակով, այսինքն կարճ առած զրկուած ենք էքսպերիմենտներ անելու հնարաւորութիւնից։ Սակայն այսպիսի կոմպրոմիսը, ինչպէս և իւրաքանչիւր կոմպրոմիս իմացութեան սկզբունքային խնդիրներում, ոչ մի արժէք չունի։ Եթէ այդ հայեցակէտ ճիշտ լինէր, դուրս կը գար, որ պատմութիւնը երբէք չի իրագործում իւր առաջ դրուած խնդիրները և երբէք չի համում իւր նպատակին։ Այդ դէպքում հասկանալի է, որ նրանով զբաղուելը իզուր ժամանակ կորցնել է նշանակում, և ամենալաւը, որ մենք կարող էինք անել, այն է, որ ուղղակի ձեռք վերցնէինք։ Նրանից և ինչպէս Շոպենի առ է ասում, բոլոր անպէտք իրերի հետ պատմութիւնն ևս զամբիւղ խուտէինք։ Ռւստի, այսպիսի թիւրիմացութիւններից խուսափելու համար անհրաժեշտ է միանգամ ընդ միշտ բացարձակօրէն յայտարարել, որ ամբողջ այն պատմահայեցողութիւնը, որը մենք մինչև այժմ նայեցինք և քննութեան հնթարկեցինք, հիմնովին սխալ է, որով

հետեւ այդ դէպքում բոլորովին անբացատրելի է մնում էնց ինքը պատմական ուսումնասիրութեան փաստը Փոխանակ նրան անհարազատ և օտար նպատակներ ու գաղափարների սխտեմ վերագրելու, հարկաւոր է, ընդհակառակն, նրա վրայ նայել ինչպէս որ նա կայ և դրա վրայ հիմնուած արդէն աշխատել բացատրելու նրա իսկական էութիւնը։ Կանուաննենք այսուհետեւ պատմութիւնը գիտութիւն թէ ոչ, դա նրա համար միևնույն է։ Դա կարող է նշանակութիւն ունենալ փիլիսոփայութեան համար, բայց պատմութեան համար լիովին բաւական է և այն, որ նա գոյութիւն ունի. և այն ձևով, որ նա հիմա կայ, բաւարարում է մարդու անհրաժեշտ պահանջներին, ինչքան էլ որ ցած համարուեն մի քանի գոկորինհօրների կողմից այդ պահանջները։ “Նմանապէս պատմութիւնը բաւականանում է նրանով, եթէ նրան յաջողուի որոշել թէ տեղի ունեցել է որ և է փաստ թէ չէ։ այդ դէպքում նրա համար նշանակութիւն չունի, թէ այդ փաստը այս կամ այն ապրիորի սխեմայի հետ համաձայն է թէ ոչ։

Մրանից 20 տարի առաջ ես գրել էի. «Մինչդեռ մարդարանութիւնը աշխատում է բացատրել մարդու զարգացման ընդհանուր ընթացքը և այդ էվոլյուցիայի օրէնքները, պատմութիւնն ի նկատի ունի մարդարանական հետազոտութեան արդիւնքները, որպէս տուեալներ։ Պատմութիւնը երբէք չի զբաղւում ընդհանր առ ու ապէս մարդով, պետութիւնով, ժողովուրդով, այլ ամեն անգամ ի նկատի ունի. այս կամ այն որ ու, յայտնի ժողովուրդը։ Ինչ խօսք, որ նա հետաքրքրում է ոչ թէ ընդհանուր օրէնքներով, որոնց ազդեցութեան տակ գտնում է այդ ժողովուրդը, այլ այն յատուկ պայմաններով, որոնց մէջ նա դրուած է։ Ես այն ժամանակ գտնում էի պատմական կեանքի էութիւնը անհատի և ընդհանուր ակնդենցների (տիպիկական ձևերի) մէջ մղւող կուռում։ Եթէկու կողմից էլ, գրում էի ես,

այս կոռուին սահմաններ են դրուած։ Այս սահմաններում աղատութեան և անհրաժեշտութեան, անհատի և հասարակութեան կոռուի համար լայն ասպարէզ է մոռւմ։

Էւոլիւցիայի հիմնական գծերում արտայայտուամ է ընդհանուր օրէնքն երի ներգործութիւնը, իսկ առանձնակի փաստերի մէջ այս կամ այն ժողովուրդի կամ անձի անհատական ազդեցութիւնը այն պայմանների վրայ, որոնց մէջ նոքա դրուած են։ Աւտի և թէպէտ պատմութիւնը ենթակայ է ընդհանուր օրէնքների, բայց նրան երբէք չի կարելի ամրող ջովին օրէնքների տակ զնել և արտայայտիլ ընդհանուր բանաձևներով։ Նրա նիւթը ըստ էութեան շատ բազմա զան է, նրա մէջ չկան երկու բոլորովին նման բաժիններ։ մինչեռ մարդարանութիւնը ձգուում է գտնելու ընդհանուրը և օրինաչափը, պատմութեան մէջ դրա հետ միասին թագաւորում է պատահականութիւնը և ազատ կամքը, որոնք արտայայտուամ են մասնակի դէպքերում։ Այսպիսով պատմագիտութիւնը չի պատկանում փիլիսոփայական և ընագիտական դիսցիլինների թուին և մենք, հետեւայէս, ոչ մի իրաւունք չունենք դատելու նրան վերջիններիս չափանիշով։ Ճիշտ է, նա շօշափում է այս երկու շըջանները, որովհեան նրա նպատակի մէջ մտնում են նաև ընդհանուր օրէնքների և իրաքանչիւր առանձին դէպքի պատճառների և հետեւանքի հետազօտութիւնը, բայց նրա իսկական նպատակը մանրամասնութիւնները ուսումնասիրելն է, ի հարկէ նա հետաքրքրում է և տիպիկական ձևերով, բայց և այնպէս իւր պլխաւոր ուշադրութիւնը դարձնումէ բազմա տեսակութեան վրայ։

Այն ժամանակուանից մինչեւ այժմ ես հետզհետէ համոզուեցի, որ այդպիսի ձեւակիրպութիւնն անբաւարար է և մասսամբ էլ ճիշտ չէ, թէ անհատի և թէ «ընդհանուր

օրէնքների» նկատմամբ։ Սակայն ինձ համար շատ ուրախալի է, որ վերջերս միկա երա թիւ բնոր, մանրակրկիտ ուսումնասիրութեան մէջ այս հարցերի վերաբերմամբ գալիս է այնպիսի եղբակացութեան, որոնք գրեթէ լիովին համապատասխանում են հէնց նոր շարադրած իմ հայեացքներին։ Եաւ սատրերը ըստ է միայն մի ինդրում, այս որ նա վճռականապէս ժըմատում է պատմա կան օրէնքների դուռը։ Նրա կարծիքով պատմութեան նպատակն է հակառակ բնադիտութեան, (որը ձգտում է ընդհանուրը հետազոտելու և օրէնքներ գտնելու), էմայիրիկ իրողութիւնները պատկերացնել իւր բոլոր, անվերջ բազմազանութեամբ։ «Պատմութիւնը» գրում է նա, պէտք է ուսումնասիրի ու ակադ իրականութեամ մէջ ոչ թէ ընդհանուրը, այլ եղակին։ Դրանով նա, ամենեկին չի կորցնում իւր գիտական նշանակութիւնը, որովհետիւ ոչ միայն ընդհանուրը, այլ և եղակին կարող է լինել գիտական հետազոտութեան առարկայ։ Այն բոլոր պընդումները, որոնց հիմն վրայ իրը թէ միայն ընդհանուրը կարող է պիտական հետազոտութեան առարկայ լինել, ճիշտ չեն և պարունակում են իրենց մէջ կոպիտ տրամաբանական սխալ քրետիօ քրիուրիօ։ Շէմպիրիկ իրականութիւնը պատկերանում է մեր առաջ որպէս քննութիւն, երբ մինք ուսումնասիրում ենք նրա մէջ ընդհանուրը, և որպէս պատմութիւն, երբ մինք դարձնում ենք մեր ուշադրութիւնը եղակի դէպքերի վրայ։ Շնոր իրականութիւնը կուսումնասիրուի մասնակի կերպով այնտեղ անհեթեթութիւն է զնել նրանց ընդհանուր հասկացողութիւնների տակ, այդ պատճառով նոյնպէս անհեթեթութիւն է աշխատել բաց անել պատմական օրէնքներ, որովհետեղ օրէնքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընդհանուր և անհեթեթութիւն է զնել նրանց ընդհանուր հասկացողութիւնների տակ, այդ պատճառով նոյնպէս անհեթեթութիւն է աշխատել բաց

նում, որ ինքը, «պատմական օրէնք» գաղափարը պարունակում է իւր մէջ ներքին հակասութիւն, տրամաբանական անյարիրութիւն contradiction in adjecto, որովհետև պատմագիտութիւն» գաղափարը և որէնքների գիտութիւնը բարովին անյարիր են իրար և փոխադաբար ժխտում են:

Եւ իրաւ, իմ բազմամեայ պատմական ուսումնասիրութիւնների ամբողջ ընթացքում ես չկարողացաց յայտնագործել և ոչ մի պատմական օրէնք և նոյն իսկ ուրիշ պատմաբանների աշխատանքի մէջ էլ ինձ չը պատահեց մինչև այժմ այդպիսի օրէնքները: Ուստի ես կարող եմ համարձակ ասել, որ պատմական օրէնքներգոյութիւն ունեն միայն իդէ այլ մէջ որպէս պոստուլատները: Այդպէս էլ մասսայական երկոյթների սահմաններում, օրինակ տնտեսական պատմութեան մէջ, ոչ մի օրէնք գոյութիւն չունի, այլ կայ միայն նմանութեան ճանապարհով դուրս բերած է մպիրի կը ընդհանր առ ու լու առ եր: Այդպէս էլ մասսայական երկոյթների սահմաններում, օրինակ տնտեսական պատմութեան մէջ, ոչ մի օրէնք գոյութիւն չունի, այլ կայ միայն նմանութեան ճանապարհով դուրս բերած է մպիրի կը ընդհանր առ ու լու առ եր հետեւել ձևով:

Տնտեսական զարգացման որոշ աստիճաններին համապատասխանում են գաղաքական կազմակիրպութեան որոշ ձևեր:

Մի ժողովուրդ, որ քիչ է տրտադրում կենսական միջոցներ, քան իրեն հարկաւոր են գոյութեան համար, կամ զոհ է զնում ներքին երկպառակութիւններին, կամ ստիպուած է լինում իւր համար միջոցներգոտնել ուրիշ կերպով՝ նուաճումների ճանապարհով՝ կամ արդիւնաբերութեան և վաճառականութեան զարգացումով. իսկ եթէ նա զրկուի սնունդի ներմուծութիւնից, այն ժամանակ այդ ժողովրդի մէջ կը նկատուի ազգաբնակութեան ուժեղ քչացում:

Բարեկեցութեան միջոցների շատացումը և կուլտուրայի յառաջադիմութիւնը փոխելով կեանքի պայմանները և բազմապատկերով պահանջները առաջ են քերում իրենց յետեւից պետութեան անկում և ժողո-

վըրդի Փիզիկական այլասերում: Ի հարկէ այդ բոլորը կարող է պատահել. սակայն սրանում ոչ մի ան հ ըածեց ու թիւն գոյութիւն չունի, ինչպէս այդ ցոյց է տալիս թէկուզ Անգլիայի օրինակը:

Ոչ մէկը այդ դրութիւններից չի պարունակում իր մէջ լրիւ պատմական իմացութիւն. ընդհակառակն՝ պատմական տեսակ է տից դրանք բոլորը սխեմաներ են զուրկ կոնկրետ բովանդակութիւնից, որը կարող է պարունակուել միայն եզակի փաստերի անվերջ բազմազանութեան մէջ: Ճիշտ է այդ ընդհանրացումները կարող են ուղեցոյց թել լինել փաստերը կարգաւորելիս և դասաւորելիս և յաճախ էլ տալիս են այս կամ այն ենթադրութեան բարձր աստիճանի համաստիռներին, բայց իւրաքանչիւր այդպիսի ենթագրութիւն միշտ կարիք է զգում յատուկ ուղղումների իրական փաստերի միջոցով:

Անհրաժեշտութիւնը, որ յատուկ է բնութեան օրէնքներին և արտայայտում է հետևեալ բանաձնով՝ երբ տեղի է ունենում «Ճ», նրան ան հ ըածեց ու քէն պէտք է հետեւի «Յ»—բոլոր այսպիսի բանաձնների միջից բացակայում է: Այդ բանաձնները իրենց մէջ միայն ցուցումներ են պարունակում պատմական էվլույթիայի ենթադրելիք հնարաւոր ընթացքի մասին: Անհրաժեշտութեան հասկացողութիւնը փոխադրուելով պատմութեան մէջ, կորցնում է իւր սպեցիֆիկ իմաստը և ստանում է վերին աստիճանի հաւանականութեան ութեան նշան ակութիւն, որից բոլոր տուժեալներով կարելի է սպասել որ և է դէպքի առաջանալը: Բայց իրօք նա կիրականանայ թէ չէ. դա երբէք չի կարելի նախատեսել լիակատար հաւանականութեամբ: Միայն այն ժամանակ, երբ նա իրօք կատարուի, մենք չնայած նրա առաջ գալուն նպաստող բոլոր պատահականութիւններին կը հ ամար ենք նրան ան հ ըածեց ու, սակայն բացառապէս այն պատճառով, որ աշ-

խարհում կատարուած քոլոր իրոզութիւնները միաժառ  
մանակ թւում են մեզ և անհրաժեշտ և պատահական և

Բնական գիտութիւնները կարող են նախորչել և գուշակել թէ որոշ մոմենտում ինչպէս կլինի մոլոր բակների գասաւորութիւնքը բայց ի հարկէ այն դէպօւմ միայն, եթէ նորմալ կարգը չի խանգարուի մի նոր, առաջ չնախատեսնուած ոյժի միջամտութեամբ, օրինակ արևային սխատեմի վրայ օտար երկնային մարմնի առաջ գալով նոյնական և բնագիտութիւնը կառ բող է նախադուշակել, որ գինամիտը բոցավառութիւն պէտք է առաջ գայ բրնձումն Բայց արդեօք ի ըականութեան մէջ այդ այդ գասաւորութիւնը կլինի, բռնու կումն առաջ կը առաջ կը գայ այս գէպօւմ, եթէ առաջ գայ էլ երբ արդեօք, և կամ այս դէպօւմ կը վիրաւորուի կամ կը սպանուի այս կամ այն մարգը, կամ անվաստ կը մնայ ուրիշ խօսքով երևան կը դայ արդեօք պատմական գիտութիւնները նախատեսել չեն կարող, սրովնեան այս բոլորը կախուած է պատահականութիւնից և ազատ կամքից, որոնց բնագիտութիւնը հաջուի չի առնում, բայց որոնց հետ ամեն քայլափիւամ պատմութիւնը հանդիպում է Այդ պատճառով պատմական ապագայի վերաբերմամբ կարելի է միայն գուշակութիւն և ենթադրութիւն անել, իսկ ճիշտ նախատեսութիւն, որը որոշէր ինչ որ պատմական օրէնքներից հիման վրայ էվլիլիցիայի անձրադիր գիտութիւնները և անխուսափելի ընթացքը, նոյնական անկարելի էր ինչպէս անկարելի է օրինակ աշխարհական գործնական հոգեբանութիւն չէ նա ի նկատի չունի լոկ լուսաբանելու մասնաւոր օրինակներով յիշեալ հագեկան պրոցեսների արտայացութիւնը, այլ դնում է նրանց իւր մեկնութեան հիմքում նոյնը կարելի էր ասել նաև պատմական օրէնքների նկատմամբ, եթէ ենթադրինք, համարաւոր վիճեր պատմական օրէնքներ գըտնելու Յայտնագործելու մոմենտից ոկած նրանք այլ ևս չեն պատկանի պատմութեան օրդեկանների թուրին, այլ ուղղակի վերջնին, կողմից կենթագրութիւն որպէս տուհաբները Պատմութեան նիւթը միշտ կայսնում է մասնաւոր, և գակի ի վիատերի հետազոտութեան և նկարագրութեան, մէջ այն բանի, որ ամենից յարմար կերպով կարելի է արտայացտել շահական տերմինով:

Իրանից ակայն տարբեր են այն դէպերը, երբ մարդկանց մէջ զարգանում է հաւատ դէպի հնարաւոր ապագան, որն իսկապէս ընդունակ է ուժեղ ազգեցութիւն թողնելու դէպերի ընթացքի վրայ Բաւական է յիշել օրինակ սոցիալ դեմոկրատիայի մարդարէու-

թիւնները հիմնուած մատերիալիստական պատմահամեցողութեան վրայ Բայց այդպիսի դէպերում իսկապէս մարդկանց մաքերին տիրապետում և դեկալարում են նրանց գաղափարները և արարմունքները, մի որ և է իրէա, որն առաջանում է որոշ պատմական պայմանների ազդեցութեան տակ:

Որ պատմական օրէնքներ գոյութիւն չունեն կախուած չէ ոչ պատմաբանի թոյլ մտածողութիւնից, ոչ էլ պատմական նիւթի պակասութիւնից, այլ դրա արմատը բացառապէս հնոց իրա պատմութեան մէջ է Այն ամենը՝ ինչ որ բնութեան և մարդկային կեանքի մէջ կատարում է օրինաչափ կերպով պատմութեան մէջ ընդունուում է որպէս ուռենալու օրինակ, բնութեան ոյժերի ներկարծումը, այնպիսի երևայթներ, ինչպիսիք են ծնունդ, մնունդ, մահ և այլն, և կամ այնպիսի պրոցեսներ, ինչպիսիք են մարդու մոտածողութիւնը, զգայութիւնն ու կամքի ակտերը Բայց ինչպէս որ բանասիդութիւնը, նոյնպէս և պատմութիւնը գործնական հոգեբանութիւն չէ նա ի նկատի չունի լոկ լուսաբանելու մասնաւոր օրինակներով յիշեալ հագեկան պրոցեսների արտայացութիւնը, այլ դնում է նրանց իւր մեկնութեան հիմքում նոյնը կարելի էր ասել նաև պատմական օրէնքների նկատմամբ, եթէ ենթադրինք, համարաւոր վիճեր պատմական օրէնքներ գըտնելու Յայտնագործելու մոմենտից ոկած նրանք այլ ևս չեն պատկանի պատմութեան օրդեկանների թուրին, այլ ուղղակի վերջնին, կողմից կենթագրութիւն որպէս տուհաբները Պատմութեան նիւթը միշտ կայսնում է մասնաւոր, և գակի ի վիատերի հետազոտութեան և նկարագրութեան, մէջ այն բանի, որ ամենից յարմար կերպով կարելի է արտայացտել շահական տերմինով:

Մեր քննադադառութեան համար լաւ պարացոյց կարող են ծառայել հնոց այստեղ մեր կողմից ներքուած

տեսութիւնները։ Նրանք հակասում են փորձի տուեալ-ներին, որովհետև

1) Նրանք հանդէս եկան այն ժամանակ, երբ բնագիտութիւնը, որ պէտք է այս տեսութիւնների համաձայն օրինակ լինէր պատմագիտութեան համար, իսկոյն ինքը ենթարկուեց և շարունակում է ենթարկուել վերջինիս կողմից այնպիսի ուժեղ ազդեցութեան, որ ամբողջ նրա ճիւղաւորութիւնները, օրինակ նկարագրական բնագիտութիւնը և երկրաբանութիւնը, աւելի և աւելի ընդունում են պատմական բնաւորութիւն։

2) Նրանք հերքում, բացասում են պատմառականութեան և անհատական կամքի նշանակութիւնը, մինչդեռ իրականութեան մէջ և ամբողջ ժողովուրդների կեանքում և հէնց մեր մէջ անպատճառ հետազոտում ենք և առաջինի և երկրորդի մշտական ազգեցութիւնը ոչ միայն արտաքին կենսական պայմանների վրայ, այլ թէ առանձին անհատների և թէ մասնաների մտածողութեան և աշխարհանայեացը վրայ։

3) Նրանք խօսում են մասսայական երևոյթների առաջնակարգ նշանակութեան մասին, գլխաւորապէս տնտեսական օրէնքների, մինչդեռ բոլորովին ակընյայտ է, որ ամբողջ տնտեսական էվոլյուցիան, բարելաւութիւնը և տէրութիւնների ու ժողովուրդների սոցիալական կազմը կախումն ունի քաղաքական մոմենտներից. (օրինակ, թէկուզ ժամանակակից Գիրմանիայում 1866—1870 թ. քաղաքականութիւնից) և նոյնպէս պատահականութիւնից և առանձին անհատների նտեղծագործող ուժերից, այսինքն այն գործօններից, որոնք չեն պայմանաւորուած տնտեսական պրօցէսաներով, չեն հանդիսանուում որպէս նրանց հետևանքներ, այլ լնդհակառակն ակտիւ կերպով ազդում են տնտեսուկան կեանքի վրայ։ Բաւական է յիշել այն բացումները և գիտերը, որոնք հիմքից յեղաշրջեցին տնտեսական կեանքը. (օրինակ շոգեմեքենաներ, էլէքտրա-

կանութիւն, քիմիայի յաջողութիւնները և գիւղատնտեսական տեխնիկան)։

Եւ վերջի վերջոյ եթէ մտածելու լինենք այն հարցի մասին, թէ ինչի վրայ են հիմնուած նոր տեսութիւնները, երևան կդայ, ուր նրանք գտնուում են իդէաների ազդեցութեան տակ։

1) Նրանք ենթամ են մոնիզմի, որպէս գիտական աշխարհանայեցողութեան պրինցիպի իդէայից, բայց միայն թէ աշխատում են այդ կիրառել սխալ ճանապարհով։

2) Նրանք երևան եկան բնական գիտութիւնների ունեցած յաջող տպաւորութեան տակ և որպ վրայ հիմնուելով միայն նրանց արժան համարեցին գիտութեան կոչման։

3) Նրանք են հանդիսանում ժամանակակից տնտեսական կոռուի արտացոլումը։

Սրանից պարզ է, որ վերլուծած տեսութիւնները, իսկապէս իրենք իրենցով ապացուցանում են իդէաների այն մեծ նշանակութիւնը պատմութեան մէջ, որ նրանք այնպէս յամառ կերպով ժխտում են։

Նոյնը կարելի է ասել նաև այն փորձի մասին, որ ուզում է պատմութեան հիմնական միաւորը ազգութիւնը դարձնել, եւ այդ հայեացը իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգութեան իդէայով լցուած պատմական տեսութիւն, XIX դարի պատմական իրականութեան արդիւնք։

Սրան զուգահեռաբար նկատւում է. և մի ուրիշ փորձ—դնել պատմութեան հիմքում աշխարհագրական միութիւնները (աշխարհի կողմերը) մի փորձ, որ մօտենալով թատրութիւններին, ընդունեց և լուսականուր պատմութեան մէջ չափազանց տարօրինակ ձևեր։

Ես ստիպուած եմ այստեղ համառօտակի մօտենալ ազգութեան ինդրին։ Ազգութիւնները

պատմութեան, մէջ ոչ միայն չեն հանդիսանում սկզբից և եթ պատրաստի ամրողջական տռւեալները, այլք բուշ բովին հակառակը, նրանք հանդէս են գալիս շատ աւելի յետոյ և պատմական զարգացման շատ աւելի բարե արդիւնք են. Այսպիսի եզրակացութեան կարելի է. հասնել, թէկուզ ժամանակակից Եւրոպայի վրայ մի ակնարկ ձգելը բնորու ազգութիւնները, որոնք ապարում են այժմ Եւրոպայում երեսն են եկել զանգանատեակ և յաճախ զուտ արտաքին (պատճական). հանգամանքներում, օրինակ, շնորհիւ ժառանգական բաժանումների, ինչպէս այդ տեսնում ենք. Սպասիայի և Պորտուգալիայի պատմութեան, մէջ. Ֆրանսիան և Գերմանիան իրենց ազգութեան ծագումով տմինից առաջ պարտական են այն պատահ ական հանգամանքին, որ Եթարի յետնորդը մեռաւ, որի ճառանքը եղաւ այն, որ միջանկեալ իշխանութիւնը գաղարեցրեց իւրինքնուրոյն գոյութիւնը:

Ես այլ ևս չեմ խօսում, այն անվերջ, բարդ, բռնըրովին էլ ոչ ժանհրաժեշտ և, ոչ օրինաշափա պրոցէսաների մասին, որոնք վերջ ի վերջոյ այն տեղը հասցըին, որ ամբողջ դարերի ընթացքում մի քանի արևելեան գերմանական ցեղեր ձուլուեցին. գերմանական ժողովրդի ամբողջութեան մէջ, մինչդեռ նիդերլանդացիները բաժանուեցին նրանցից և կազմեցին առանձին ազգութիւն: Այս բոլոր հանգամանքները միանգտամայն պատահական են, բայց և այնպէս հէնց նրանք են, որ հիմք դրին ժամանակակից ազգութիւններին:

Ազգութիւնը չի հիմնուած նոյնպէս անօգատնառ տեղական միութեան, լեզուի, սովորութեան, կրօնի. և այլ ազգակցութեան վրայ, որ մի որ և է կամ մի քանի մարդկային գրուպպաների մէջ նկատկելի է. նաբոլորովին չի հանդիսանում, ինչպէս սովորաբար ընդունած է մտածել, միայն աւելի ձևաւորուած և որոք

արտայատութիւնը այդ ազգակցութեան, միայն գիտակցուած միութեան արդիւնք, որը սկզբում եղել է անդիտակցական, Ընդհակառակն ազգերի մեծ մասի մէջ մտնում են շատ բազ մատես ակ ժողովութիւններ: Սուվորաբար ազգութիւնը զարգանում է աճում է. հիմքուներալով շատ թէ քիչ ցեղային միութեան գաղափարներով արդիկ ժնչ խօսք, որ այդցեղը ուժեղակալով և զարգանալով որպէս ազգութիւն, աշխատուած է նուաճել իւր համար անխախտելի տիրապետութիւն և առաջնութեան պատիւ լեզուի մէջ Բայց այզպիսի գերիշխանութիւն ստացած ցեղը շատ գեղուած չի լինում այն ազգութիւննը, որը գնում է գլուխուոր հիմնաքարը ստեղծագործող ազգութեան, այսինքն այն ցեղը, որ հիմնում է պետութիւն, որովհետև օրինակ Անդիտական նորմանները, իսկ ոռմանական նորմանները, իսկ ոռմանական երկիրներում յաղթող—գերմանները կլանուեցին նուաճուած ցեղերից:

Սակայն պետութիւնն էլ չի կարող համարուել ազգութեան անհրաժեշտ հիմք: Խտալացիները և գերմանացիները ազգութիւն էին կազմում: զեռ այն ժամանակ, երբ բաժանուեցին բաղմաթիւ, առանձին պետութիւնների նոյնը կարելի է ասել նաև այն ժողովուրդների մասին, որոնք մտնելով ոչ ազգային պետութիւնների կազմի մէջ, ինչպէս օրինակ Աւստրո-Ունգարիան, Թուրքիան, Անգլիան, ներկայումս ձգտում են քաղաքական անկախութեան:

Մեզ զբաղեցնող խնդրի չափազանց քարդ գինելու բնորոշ օրինակ, կարող է ծառայել Անգլիան: Այս միացեալ թագաւորութեան կազմի մէջ մինչեւ այժմ մտել են վեցեհաթ տարբեր ազգութիւններ, անդիտակց ներ, սաքսոնական շոտլանդացիներ, վալեհացիներ, գլուխը, հրէաներ, անգլիական և կելտախօս իրլանդացիներին, հիմնուելով նրանց՝ որպէս առանձին ազգութեան՝ քաղաքական տեհ-

դենցների վրայ, այն ժամանակ պէտք է ի նկատի ու նենալ, որ նրանք ստորաբաժանում են ըստ իրենց բարբառների երկու տարրեր զրուպաների, որ նրանք բաղկացած են բողոքականներից և կաթոլիկներից և վերջապէս, որ նրանց ազգային հերոս առաջնորդ Պարնելլը՝ «Իրանդիայի չթագաղրուած թագաւորը» սաքսոնական բողոքական էր, ինչպէս Բենգարիայի հերոս Կաշուտը սլաւոն էր: Նոյն բանը նկատում է ի միջի այլոց ժամանակակից բոլոր ազգութիւնների մէջ, չըխօսելով դեռ այն մասին, որ նրանք բոլորը շատ թէ քիչ չափով խառնում են հրէական տարրերի հետ: Այսպէս մենք տեսնում ենք.

Յ թ ա ն ս ի ա յ ո ւ մ' հիւսիսային ֆրանսիացիներին, պլովանսալցիներին, բրիտանական կէլտերին, բասկերին:

Ս պ ա ն ի ա յ ո ւ մ' կաստիլցիներին, արագոնցիներին, կատալանցիներին, բասկերին:

Գ ե ր մ տ ն ի ա յ ո ւ մ' ճարաւային գերմանացիներին, հիւսիսային գերմանացիներին, ֆրիզներին:

Ընդհակառակն միենոյն լեզուով խօսող և միենոյն ցեղին պատկանող ժողովուրդները կարող են և չպատկանել միենոյն ազգութեան, ինչպէս օրինակ Շվեյցարիացիները և Գերմանացիները, Անգլիացիները, Հիւսիսամերիկացիները: Վերջիններս չնայելով որ խօսում են միենոյն լեզուով, ինչ որ անգլիացիները, բայց և այնպէս առանձին ազգութիւն են, որովհետև ցանկանում են լինել այդպէս:

Ա ն ա այսուեղ մենք մօտեցանք գլխաւոր և վճռական գործունին: Ազգութիւնը հիմնուած է կամքի, այսինքն իդէայի վրայ: Մի ազգութիւն կազմում են մարդկային այն գրուպաները, որոնք ցանկանում են միանալ, միութիւն կազմել: Այդ միութեան ստեղծման համար պահանջւում է ակտիւ գործութիւն է ու թիւն, կամքի ոյժ, որոնք և տարբերում են ազգութիւնը ցեղից:

Թէպէտ և քաղաքական միութիւնը և անկախութիւնը հանդիսանում է ներկայումս ազգային ձգտումների բարձր և ընդհանուր նպատակ, բայց նրանք չեն սահմանափակւում անպատճառ ազգայնութեան գաղափարի մէջ: Դրանց ապացոյց ոչ միայն յոյները և հրէաները կարող են ծառայել, այլև XVIII-րդ դարի Լեսինգի և Գէոթէի շրջանի գերմանացիները, որոնք ազգութեան էութիւնը տեսնում էին բացառապէս կուլտուրական ինքնուրոյնութեան մէջ, որը շատ գեղեցիկ յարմարւում է ազգայնական անտարբերութեան և համայնքաղաքացիական տեսնենցների հետ:

Հին ժողովուրդների մէջ միայն երեքը հասան ազգութեան լիակատար զարգացման՝ հրէաները, իրանցիները և յոյները, սակայն միայն իրանցիների մէջ ազգութեան գիտակցութիւնը ընդունեց կրօնականի հետ նաև քաղաքական գունաւորումն, մինչդեռ հրէաների մէջ նա ստացաւ բացառապէս կրօնական բնոյթ, խակ յոյների մէջ, որոնց մօտաւորապէս VII-րդ դարից կարելի է համարել ազգութիւն, զուտ կուլտուրական ընաւորութիւն: Այդ ժողովուրդների շարքում իրենց լեզուով և ծագմամբ իտալիայի ժողովուրդներից խորապէս տարբեր, բայց քաղաքականապէս նրանց հետ միացած բարձրանում է չորրորդ ազգութիւնը, իտալիկները: Թէպէտ չնորին հոռմէացիների համաշխարհյին տիրապետութեան այս ազգութիւնը չհասաւ լիակատար զարգացման, բայց և այնպէս նա այնքան ուժեղ էր, որպէս իդէա, որ հիմք դարձաւ ժամանակակիցի իտալիայի պատմութեան համար ոկտած վերածնութեան դարեշրջանից մինչև մեր ժամանակակիցները:

Եւ այսպէս, ազգութիւնը պատմութեան միութիւն համարել և նրա վիճակներից հանել պատմական էվոլյուցիայի նորմերը, միանգամայն սխալ է: Ինքն իւր մէջ պարփակուած ոչ մի ազգային պատմութիւն գոյու-

թիւն չունի. բոլոր ժամանակները, որոնք քաղաքան և կուլտուրական տևական միութեան մէջ են մտել, ներկայանում են պատմութեան համար մի միութիւն մինչև այս ժամանակ; քանի զեռ նրանց կամը չէ կտրուել պատմութեան էվոլյուցիայից; և վերջի վերջոյ առանձին ժողովուրդների, աղետութիւնների, ազգութիւնների պատմութիւնը հանդիսանում է մի մասը մի հատիկ, եղակի ընդհանուր պատմութեան: Թէպէս կարելի է նրանց զիտել բաժան բաժան, բայց երբէք չի կարելի նրաց ուսումնասիրել մնկուսացած, առանց ընդհանուրի հետ կապակցելու: Պատմական հետազոտութեան և իրաքանչիւր պատմական աշխատանքի հիմքը, գերազոյն նպատակը, եթէ նոյն իսկ նա ուղղուած է մասնաւոր, եղակի առարկաներին, կարող է լինել միայն ընդհանուր պատմութիւնը:



Եթէ առաջնական բնոյթ կրող այս խորհրդածութիւններից յետոյ անցնում եմ իմ ուսումնասիրութեան գրական մասին, փորձելու աւելի պարզ որոշել պատմութեան էութիւնն ու խնդիրը, ոչ թէ նրա բովանդակութեան կեղմից այլ տեսականօրէն, այսինքն նրա ձևի կողմից:

Պատմութիւնը դէպքերի նկարագրութիւն է, կամ աւելի ճիշտ ասած ժամանակի մէջ առաջ եկած փոփոխութիւնների նկարագրութիւն: Այդ պատճառով նրա օրիէկտը միշտ վերաբերում է անցեալին: ուսումնասիրութեան վայրկեանին այդ օրիէկտը արդէն գոյութիւն չունի: կարող են գոյութիւն ունենալ միայն նրա հետեանքները այսինքն կեանքի պայմաններում նրա առաջացրած փոփոխութիւնները:

Եթէ ինդրին նայենք զուս վերացական տեսակէտով, այս ժամանակ, ի հարկէ, աշխարհում բոլորը, ինչ որ ընդունակ է փոփոխութեան ենթարկուելու, կարող է լինել պատմական հետազոտութեան առարկայ այսպէս օրինակ կարելի է գրել որ և է գետակի պատմութիւնը, հրաբուխի, հանքի (օր. աղի կամ ոսկու) և կամ առանձին կինդանու, կամ կենդանիների տեսակների պատմութիւնը, կարելի է գրել նաև կաղնու հացենու պատմութիւնը: Բայց աւելի նեղ, յատուկ

իմաստով մենք պատմութեան տակ հասկանում ենք միայն մարդկային միջավայրում առաջացած դէպերի նկարագրութիւնը և եթէ այստեղ էլ սկզբում գործ ածենք պատմութիւն հասկացողութիւնը ընդհանուր իմաստով, նրա մէջ կը մտնեն, քաղաքական պատմութեան հետ նաև կուլտուրական պատմութեան բոլոր ճիշդերը:

Պատմաբանի առաջին և հիմնական խնդիրը կայանում է երբեմն տեղի ունեցած փաստերը՝ որու ելու և ճշտելու մէջ: Եթէ պատմաբանը չի բաւարում այդ պահանջին, եթէ նա բաւարար կերպով ծանօթ չէ փաստացի նիւթին, առանձնակի, եզակի փաստերին, այդ դէպում նրա բոլոր աշխատանքն ի զուր է: Նա կարող է, (ինչպէս որ յաճախ պատահում է), յայտնագործել հետաքրքիր, սրամիտ կոմքինացիաներ և տեսութիւններ, որոնք թերևս հասարակութեանը գրաւեն իրանց բարեկազմութեամբ, բայց այդ բոլորը չունի ամենաչնչին արժէք անդամ, այլ միայն ձգում է ընթերցողին մոլորութեան մէջ: Այս բոլորը երևակայական է, եթէ պատմաբանը ծանօթ չի փաստերին և կամ սխալ է հաղորդում, մի խօսքով եթէ նրա պատմական իմացութիւնն անբաւարար է. փաստերը և ոչ թէ տեսութիւնները պէտք է ծառային հիմք պատմագիտութեան համար:

Բայց իւրաքանչիւր մոմենտում կատարուած դէպերի քանակը անսահմանօրէն մեծ է և այդ պատճառով նրանք երբէք չեն ըմբռնուիլ իրենց ամբողջութեան մէջ, ինչքան էլ որ մենք կէտ առ կէտ և մանրակրիտ հաւաքելու լինենք նիւթը: Կը դառնան արդեօք նրանցից մի քանիսը պատմութեան առարկայթէ ոչ, դա կախուած է ամենից առաջ այն զուտ արտաքին պարագայից, թէ արդեօք նրանցից որ և է հետք կը մնայ, օրինակ գեղարուեստական երկասիրութիւն, կամ այդ դէպերին ժամանակակից մարդու չէ, ինչպիսիք են օրինակ երկրաբանութիւնը, համախօսութիւնը և այլն:

զու որ և է գրուածք, որ աւանդի նրանց յիշատակը յետնորդներին: Այդ պատմառով պատմութեան գոյութիւնը հնարաւոր դարձնող արտաքին պայմանը հանդիսանում է ամենից առաջ պատմական նիւթի ներկայ լինելը, իսկ այսաեղից պարզ է, որ պատմագիտութեան գոյութեան հէնց հնարաւորութիւնը կախուած է պատմականութիւնից, այսինքն այն բանից, թէ արդեօք որ և է դէպք դարձել է իւր վրայ ուշագրութիւն և եթէ դարձել է, այդ մասին որ և է տեղեկութիւն կամ դիտողութիւն հասել է մեզ թէ ոչ: Որպէս օրինակ կարելի է առաջ բերել այն, թէ ինչպէս առաջ են զնացել մեր պատմական հասկացողութիւնները ամբողջ հաղարամեակների ընթացքում, շնորհիւ այն հանգամանքի, որ XIX-րդ դարում հնարաւոր եղաւ, արենելքի և Յունաստանի հնագոյն յիշատակարանները բաց անել և կարդալ: Ընդհանրապէս այդպէս է վիճակը բոլոր գիտութիւնների, որոնք իրենց օրյեկտները ուսումնասիրում են պատմական տեսակէտից: Արանցից բացառութիւն չեն կազմում նաև այն գիտութիւնները, որոնց ուսումնասիրութեան օբյեկտը մարդը չէ, ինչպիսիք են օրինակ երկրաբանութիւնը, համախօսութիւնը և այլն:

Թէպէտ որ և է դարաշրջանի և շատ անդամ մի փոքր ժամանակամիջոցի մասին մեր տրամարդութեան տակ եղած տեղեկութիւնների քանակը լինում է չափազանց շատ, երբեմն նոյն իսկ աներեակայելիք այնպէս որ եղակի, մի հատիկ ուսումնասիրողի հայեցակէտով նա կարող է թուալ անսահման, բայց այդ նիւթը պատմաբանի համար ունի տարբեր գնահատութիւն: Նիւթի մեծագոյն մասը նա կարող է թողնել անուշադիր, միւս մասի վրայ բաւական է, որ նա մի հարեւանցի հայեցք ձգի: Ահա այս պատճառով ծագում է մի կապիտալ հարց՝ որ փաստերը կարող են պատմական համար ունենալ կարելի է

ասել նաև ժամանակակից կեանքի վերաբերմամբ. իւրաքանչիւր վայրկեանում մենք նկատում ենք անթիւ, անհամար անցքեր. ի՞նչպէս իմանալ, կան արդեօք նրանց մէջ պատմական փաստեր և եթէ կան, որոնք են. Ընդհանուր գծերով այդ հարցի պատասխանը կարելի է ձևակերպել այսպէս. պատմական կարող են համարուել միայն այնպիսն ի փաստերը, որոնք թողել են և կամ թողնում են որոշ ազդեցութիւն. Այն հարցին թէ ինչ է ազդում կեանքի վրայ, մենք իմանում ենք ամենից առաջ ժամանակակցութիւնից, որի մէջ մենք անմիջապէս ուսումնասիրում ենք այդ ազգեցութեան արդիւնքները: Բայց մենք կարող ենք որոշել այդ գործոնները նաև անցեալում, պատկերացնելով մեր առաջ այս կամ այն մոմենտը, որպէս ներկայում տեղի ունեցող երկու դէպքերումն էլ մենք տեսնում ենք մի քանի նախորդող դէպքերի ազգեցութեան տակ առաջացած բաղմաթիւ, ամեն տեսակ պայմաններ, և ահա այդ վերջինները, այսինքն մեր ուսումնասիրած պայմանների պատճառները, մենք կոչում ենք պատմական դէպքեր:

Բայց նոյն իսկ պատմական փաստերի այսպիսի սահմանափակման դէպումն էլ առանձին փաստերի քանակութիւնը գեռ ևս չափազանց շատ է: Հարց է. ինչով պիտի զեկավարուի պատմաբանը փաստերի յետագայ ընտրութեան դէպում:

Եւ այդ հարցին կարելի է պատասխանել միշտային ժամանակակցութեամբ: Ընտրութիւնը հիմնում է պատմական հետաքրքրութեան վրայ, որ նա տածում է որ և է կենսական երևոյթին, որի համար և կարիք է զգացում ուսումնասիրել նրա պատճառները: Ի՞նչպիսի երևոյթներ են իսկապէս հետաքրքրութիւն շարժում, այդ ամբողջովին կախուած է ժամանակակցութեան ընաւորութիւնից, որի համաձայն առաջ են քաշւում երբեմն քաղաքական, երբեմն կրօնական և

երբեմն տնտեսական, երբեմն գրականութեան, գեղարվեստի ինտերեմները:

Ոչ մի բաց արձակ նորմա այստեղ լինել չի կարող: Միկկերտն ասում է. «Ես երևոյթը որ Ֆրիդրիխ Վիլհելմ IV մերժեց կայսերական թագը, պատմական իրողութիւն է, սակայն պատմաբանի համար բոլորին անտարբեր է, ինչպիսի դերձակ է կարել նրա շորերը, թէպէտ այդ խնդրի վերաբերեալ կարելի էր գտնել հաւաստի տեղեկութիւններ»: Բերած օրինակը փայլուն է, բայց չի կարելի ասել, որ նա ճիշտ է. ի հարկէ քաղաքական պատմութեան համար այդ դերձակը ոչ մի նշանակութիւն չունի, բայց մենք կարող ենք պատկերացնել պատմութեան այնպիսի բաժանումներ, որտեղ նա կարող է հետաքրքրութիւն շարժել. օրինակ տարածների կամ դերձակների, արհեստների, գների պատմութեան մէջ և այլն... Եւ այստեղ, ուր ծագում են այդպիսի խնդիրներ, բնական է, որ ինեն դրանց բաւարարութիւն տուող փորձեր:

Ես կտրիք չեմ զգում այստեղ այն հարցի մանրամասն քննութեամբ զրաղուել, թէ ինչու վրայ է հիմնուած հետաքրքրութիւնը դէպի պատմութիւնը, որովհետև լիովին բաւարար եմ համարում նրա գոյութեան փաստը: Պատմական ինտերեսի առարկան կարող է լինել թէ առանձին մարզը և թէ հասարակութիւնը, ժողովուրդները, պետութիւնները, ամբողջ կուլտուրաներ. բայց այդ առարկաներից ոչ մէկն ինքն ըստ ինաքեան հետաքրքրութիւն չի զարթեցնում միայն նրա համար, որ նա գոյութիւն է ունեցել: Նա հետաքրքիր է շնորհիւ այնազդեցութեան, որ ինքը թողնում է և շարունակում է թողնել կեանքի վրայ:

Որ պատմութիւնը կարող է վերաբերուել միայն մարդկային հասարակութեան, այս կամ այն հասարակական սոցիալական գրուպպաներին, դա ինքն ըստ ինքեան հասկանալի է, որովհետեւ իւրաքանչիւր անհա-

տի կեանքը և գործունէութիւնը կարող է լնթանալ միայն միւս մարդկանց հետ ոերտ կապակացութեան և փոխազդեցութեան մէջ:

Որքան լայն է այն շրջանը, որի վրայ տարածւում է պատմական իրողութեան ազդեցութիւնը, այնքան շատ նշանակութիւն ունի վերջինս և այնքան աւելի ուժեղ է մեր մէջ նրա զարթեցրած հետաքրքրութիւնը։ Հետաքրքրութեան տեսակէտից առաջին կարգում կանգնած են մի կողից կուլտուր-պատմական երեսոյթները՝ կրօն, գրականութիւն, գեղարուեատ, իսկ միւս կողմից քաղաքական շրջանին վերաբերող գէպքերը, որովհետեւ այս երկու երեսոյթների շրջանը շատ լայն է։

Պատմութեան բոլոր մասերի մէջ, առաջնակարգ տեղը տրւում է քաղաքական պատմութեանը. քաղաքական իրողութիւններից ուժեղ կախուածութեան մէջ են գտնւում մարդկային գործունէութեան բոլոր արտայայտութիւնները, որովհետեւ քաղաքական միութիւնը—պետութիւնը (այս խօսքի լայն իմաստով, դրա հետ հստկացած նաև ցեղական կիոնքը) հանգիսամում է մարդկային կիանքի կազմակերպութեան կարևոր ձե. ուստի պետութեան մէջ առաջացած իւրաքանչիւր փոփոխութիւն թողնում է վճռական ազդեցութիւն կիանքի միւս կողմիրի վրայ։ Բայց և այսուեղ վերջին ժամանակներս փորձեր եղան նոր հայեցակէտներ ձեռք բերելու և տեղափոխելու ծանրութեան կենտրոնը կուլտուրական և տնտեսական պատմութեան մէջ։ Բայց դրա համար, ինչպէս ես արդէն վերեւում ցոյց տուի, ստիպուած էին փորձի տուեաները տեսութիւններին զոհ բերելու, որ դարձնում է այդ փորձը, չնայած նրա կողմակիցների բոլոր ջանքերին, միանգամայն ապարդիւն։ Քանի մարդկային կեանքը հիմնովին չի փոխուի, քաղաքական պատմութիւնը միշտ կը բռնի պատմութեան մէջ կենտրոնական տեղ է:

Բոլոր վերոյիշեալ խորհրդածութիւններից ըըզ-խում են հետեւեալ շատ կարևոր եղբակացութիւնները։ Առաջին. Պատմութեան առաջ կարող է պատմականորէն կարելի է ուսումնասիրել միայն նրանց պատճառները, բայց ոչ թէ այդ գէպքերը, որովհետեւ այն, ինչ որ նրանց վրայ կարող է ազդեցութիւն ունենալ և մեծ հետեւանքների հասցնել, միայն ապագան ցոյց տալ կարող է, ինչոց դրա համար էլ առանց զրանց զիտութեան գրուած պատմութիւնը պլրոբլեմատիկ կը լինի և թէական և կարիք կունենայ յետագայ ապացոյցների։ Այդ պատճառով ինչքան որ ընդարձակ լինի որ և է դարաշրջանի վերաբերեալ նիւթը, յետագայ սերունդները չեն գտնիլ այդ նիւթի մէջ շատ բաներ, որ նրանք կը ցանկանային իմանալ իրենց ինտերեսի տեսակէտից և այդ պակասը կարող են լրացնել միմիայն հետեւութիւնների միջոցով։ Այդ բանը շարունակ կրկնում է, երբ մարդ ուսումնասիրում է նոր կուլտուրական տնտեսական և քաղաքական հոսանքների ծագումը։ Թէ որքան է դիտում գէպքերին ժամանակակից պատմաբանը, այսինք ինչքան քիչ կամ ինչքան շատ այն բանից, որ ապագայում կարող է կարևոր նշանակութիւն ունենալ, այդ կախուած է նրա թափանցողութիւնից, ապագայի վերաբերմամբ նրա հայեցքի անվրէպութիւնից. բայց ինչքան էլ նա թափանցող լինի, երբէք չի դիտի այն բոլորը, որը կը ցականան իմանալ նրա յետնորդները։ Շատ բան էլ որ ապագայում կարևոր կը թուայ, կը սայթքի նրա ուշադրութիւնից, որովհետեւ նա չի կարող նախատեսել, որ այս կամ այն գէպքը երբ և իցէ պատմականորէն կարևոր էվոլյուցայի ելակէտ կը լինի։ Բայց նոյն իսկ եթէ նա դիտի այդ գէպքերն էլ, դարձնալ այն պայմաններում որոնց մէջ նա ապրում է, այդ գէպքերը կարող են թուալ նրան աննշան և տարբեր։ Այդ

պատճառով նոյն իսկ ամենայայտնի պատմական աշխատանքն անդամ, միևնույն է պատկանում է նա նկարագրած դէպքերի ժամանակին, թէ վերագրւում է աւելի ուշ, բայց մեզ համար արդէն անցեալ ժամանակին, անկարող է լիովին պատասխանել ժամանակակից խնդիրներին, իւրաքանչիւր դարաշրջան դնում է նոր խնդիրներ, որովհետեւ ապրում է նոր պայմանների ազդեցութիւն տակ:

Երկրորդ հետևողութիւնն այն է, որ պատմական ուսումնական սիրութիւնը միշտ հետեւանքից պատճառի մասսին եզրակացութիւն է հանում: Ճիշտ է, մնրձաւոր առարկան հանդիսանում է «ինչպէս և ինչ», այսինքն անցեալի որ և է փաստի որոշումն ու ճշգրտմը կոնկրէտ ձևով, բայց համարելով որ և է փաստ պատմական, հէնց դրանով մինք հաստատում ենք նրա աղղեցիկ լինելը, հակառակ դէպքում պատմութիւնը նրանով չէր հետաքրքրուիլ և չէր ձգտի այդ փաստը իւր իսկական ձևի մէջ վերականգնելու:

Այսպէս ուրեմն ամեն մի պատմական ուսումնասիրութիւն ենթագրում է, որ որոշ գործողութիւն է տեղի ունենում և որոշում է այդ գործողութեան պատճառները: Բայց այդպիսի պատմական հետակառութիւնը գործողութիւնից դէպի պատճառը, ինչպէս յայտնի է, միշտ առեղծուած այսին է և այդ պատճառով էլ երբէք չի կարող տալ բացարձակ, հաւաստի տեղեկութիւններ: Ուստի պատմական իրողութիւնները դնում են մեր առաջ միշտ նորանոր խնդիրներ: Յայտնի է, ինչպէս յաճախ պատմական իմացութեան արդիւնքները բերել են այնպիսի եղբակացութեան, որ այն դէպքերը, որոնց առաջ առելի նշանակութիւն էին տալիս, յետագայում համարում են ոչ էական: և վճռող նշանակութիւն սկսում են ստանալ բոլորովին այլ ֆակտորներ:

Յատկապէս նրա համար, որ պատմական եղբացութիւնը միշտ առեղծուածային է, որա համար իմացութեանն ամեն տեղ դրուած են սա և մանն եր որոնց վրայով նա ոյժ չունի ստոնելու, ինչքան էլ ցանկանայ, որովհետեւ ամեն վայրկեանում գործում են բազմաթիւ և բազմազան ֆակտորներ, և որոնց իւրաքանչիւրը իւր հերթին հետևանք է նախորդների: Իւրաքանչիւր գործօնի պատճառական շղթան ճիւղաւորում է անվերջ, նման տոհմաբանական ճիւղաւորութեան: Պատճառների հետևանքների այս շղթայի միջից մեր իմացութեան մատչելի են միայն մի քանի օղակներ, տւելի կամ պակաս չափով նայած պատմական նիւթի տուեանքներին եթէ մենք չենք ցանկանում սահմանափակուել նրանով, այն ժամանակ մեր պատմական եղբակացութիւնները միանգամայն առեղծուածային կը լինեն: մեր հաւատը, թէ մեզ յաջողուել է գտնել ճշմարիտ պատճառը, զնալով քչանում է: Գիտնականորէն հիմնաւորուած ենթադրութեան փոխարէն առաջ է գալիս խախուտ մի կարծիք, որ արդէն ոչ մի պատմական արժէք չի ունենայ ինչքան էլ նա թագնուած լինի գիտութեան անույան տակ: Գտնել այստեղ իսկական սահմանը և գուրս չգալ նրանից, պատմական ուսումնասիրութեան խիստ անհրաժեշտ խնդիրներից մէկն է: Այն բանի որոշումն, թէ պատմաբանը որքան կարող է առաջ գնալ իւր ենթադրութիւնների և կոմբինացիաների մէջ և ինչքան նա իրաւունք ունի այդ ենթադրութիւնները իւր պատճառածքի մէջ մտցնելու, իւրաքանչիւր առանձին դէպքում կախուած է բացառապէս պատմաբանի տակտից, իւր նիւթը ճիշտ գնահատելու նրա կարողութիւնից:

Այդ պատճառով դէպքերի պատկերը փոխւում է ամեն անգամ, երբ մենք հարստանում ենք նոր նիւթով: այսպէս օրինակ մենք օգտւում ենք Վալենցտայնի, Ֆրիդրիխ Մեծի, Փրանսիական յեղափոխու-

թեան մասին եղած ահագին պատմական նիւթերից, բայց և այնպէս ոչ մի կասկած չի լինի այն բանում, որ եթէ այդ նիւթը կրկնապատկուէր, առաջ կը բերէր բազմաթիւ փոփոխութիւններ ոչ միայն մանրամասնութիւնների, այլ և ուրիշ շատ կարեոր խնդիրների ըմբռնման և պատկերացման մէջ։ Շատ յաճախ հէնց այնպիսի շրջաններում, ուր նիւթը չափազանց ընդարձակ է, ուսումնասիրողները բայց և այնպէս, յայտարարում են, որ այդ դեռ բաւական չէ, որ հարկաւոր են դեռ նոր աղբերներ, նրա համար, որ կարելի լինի ստանալ պարզ դադափար դէպքերի մասին և կազմել նրանց մասին վերջնական դատողութիւն։

Դրանով էլ պայմանաւորուած է մասնակի ուսումնասիրութիւնների հակայական տարածումը. հաւաքելով ամենից առաջ մեզ մատչելի բոլոր նիւթերը, որոնք վերաբերում են բարձր դեկափառզ դէմքերին՝ թագաւորներին, պետական մարդկանց, զօրապետներին, մենք նրանց գործունէութիւնը ճշութեամբ հասկանալու և նրանց յաջողութիւնն ու անյաջողութիւնը անսխալ գնահատելու համար կարելք ենք զգում նոր նիւթերի, որոնք վերաբերում են մինիստրների, դեսպանների, բարձր զինուրականների մինչև դատաստանական ծառայողների անձնաւորութեանը և գործունէութեանը։ Եթէ խօսքը ընարութիւնների մասին է, այն ժամանակ մինչև ընտրողները, եթէ պատերազմի մասին է, մինչև սպաները և զինուրները։ Նմանապէս ամրող ժողովուրդների, պետութիւնների պատմութեան կողքին հանդէս են գալիս առանձին տեղերի, քաղաքների, գիւղերի, պալատների, արդիւնաբերութեան տեսակների, արհեստների մինչև առանձին վաճառականի և գործարանատիրոջ պատմութիւն։ Կոպիտ սխալ կլինէր մտածել, իբր թէ նիւթի հաւաքելու և ընդարձակելու այս պրոցէսու երբ և իցէ վերջ կու-

նիւթից իրականութիւնն անվերջ է և անըմբանելի իւր բովանդակ ամբողջութեան մէջ։

Բայց և այնպէս այստեղ էլ կան սահմաններ, որոնցից գուրս չպէտք է գայ ուսումնասիրութիւնը, ի հարկէ ոչ բացարձակ և մի անգամ արդէն որոշուած, այլ այնպիսի սահմաններ, որոնք ամբողջուվին կախուած են հետախուզողի տակտից, և նրա «պատմական հոտառաթիւնը»։ Minima non curat praeter-պրինցիպը վլովին կարելի է տեղափոխել պատմութեան մէջ։ Պատմաբանի խնդիրը կայանում է դէպի պատկերը իւր ամբողջութեամբ իւրացնելու և վերաբացրելու մէջ։ առանձին գունաւորութեան այնքան նշանակութիւն ունեն, որքան ծառայում են ամբողջին լրացնելու համար, մանրամասնութիւնները կազմում են միայն այդ պատկերի ֆօնը, այնպէս որ նրանց շատ մանրամասնորէն ուսումնասիրելը, որն անհնարէ գլխաւոր դէպերի նկարագրութեան համար, միայն կարող է փչացնել ընդհանուր տպաւորութեան ամբողջութիւնը, որի հայեցքով ոչ մի սխալ գիծ նշանակութիւն չէր ունենալ։ Այդ պատճառով շատ մանրամասնութիւններ, որոնք հետաքրքրում են մասնագէտուսումնասիրողին, կորցնում են մեզ համար իրենց նշանակութիւնը, որքան շատ մենք կանդնենք ընդհանուր հայեցակէտի վրայ։ Նոյն իսկ այն նշանաւոր հարցը, թէ ի՞նչպէս ծագեցին Բերլինում մարտեան յեղափոխութիւնն առաջ բերող երկու գնդակները, պատմականորէն շատ քիչ նշանակութիւն ունին. պարագաները այնպէս էին դաստարուած, որ ընդհանրում կարող էր առաջ գալ որ և է պատահմունքից, որը ի հարկէ ըստ ինքեան համարեա ոչ մի պատմական հետաքրքրութիւն չունի։

Թէ որքան կարելի է թափանցել մանրամասնութիւնների մէջ, այդ կախուած է այն նպատակից, որ դնում է իւր համար ուսումնասիրողը, ինքն ըստ ին-

քեան հասկանալի է, որ հօթնամեայ պատերազմի ծառումը, կամ որ և է կուռի ընթացքը մասնագիտական մենագրութիւնների մէջ պէտք է քննութեան առնուխն այլ կերպ, քան ամբողջ պատերազմի պատմութեան մէջ, Ֆրիդրիխ Մեծի պատմութեան մէջ այլ կերպ, քան XVIII-րդ դարի պատմութեան մէջ:

Այն դէպքերը, որոնց մէնք ազգեցութիւն ենք վերագրում և որոնց այդ պատճառով համարում ենք պատմական, յաճախ գոնուում են մէր արամադրութեան տակ եղած նիւթերի մէջ. օրինակ պատերազմը որպէս պատճառ հողային փոփոխութիւնների, համաձարակը որպէս պատճառ ազգարնակչութեան պակասելուն և այլն... Այսպիսի դէպքերում ամբողջ հարցն ուղղուած է բացառապէս այն բանին, թէ արդեօք դէպքը համարել վճռական նշանակութիւն ունեցող մոմենտ թէ ոչ: Բայց շատ յաճախ պատճառը յիշատակուած չի լինում ուղղակի աղբիւրների մէջ, այնպէս որ նա կարող է գանուել որոշուել ոչ այլ կերպ, քան իւր հետեանքներով և այստեղ է որ ամբողջ թափով երկան է գալիս պատճառ կան հետեւթեան տռեղ ծուածութիւնը:

Այս առեղծուածութիւնն իրեն զգալ է տալիս ամենից առաջ այնաեղ, ուր խօսք է լինում կամքի ակտերի, ընդհանրապէս որ և է անհատի գործունէութեան մասին, որովհետեւ մարդու ներքին աշխարհը ենթակայ չէ մէր ուսումնասիրութեան և նրա մասին կարելի է գաղափար կազմել միայն նրա արտաքին արտայատութիւններով, այսինքն նրա արարմունքների վրայ հիմնուած: Որ մարդու իւրաքանչիւր արարմունքը հանդիսանում է կամքի ակտի հետևանք, զա մեղ առանց այլկայլութեան յայտնի է: Բայց այդ ծածուկ հոգեկան պրոցէսսի է ու թիւնը երբէք չի կարելի ըմբռնել բացարձակ հաւաստիութեամբ. նրա մասին կարելի է միայն ենթագրութիւններ:

անել որոնց նկատմամբ նոյն իսկ այն դէպքում, երբ մէր ուսումնասիրութիւն առարկայ եղող անհատը ինքն արտայացտում է իւր արարմունքների մասին, մէնք երբէք չենք կարող հաւաստի լինել, որ այդ անհատն ասում է ամբողջ ճշմարտութիւնը և չի ծածկում մեղնից որ և է բան: Ուստի չնայած մէր արամագրութեան տակ գտնուած նիւթի առատութեան, կարելի է միշտ վիճաբանել այն մասին, թէ Ֆրիդրիխ Մեծը հօթնամեայ պատերազմը պաշտպանողական թէ նուածողական նպատակով ձեռնարկեց: Ինչքան էլ շատանայ մէր նիւթը, մէնք միենոյն է, երբէք այդ հարցի պատասխանը չենք ստանալ և իւրաքանչիւր պատմուան այդ հարցը կը վճռի իւրատեսակ, նայած այն պատկերացման, որ նա կը կազմի թագաւորի անձնաւորութեան և այն հանգամանքների մասին, որի մէջ սրան վիճակուած էր գործելու:

Յաճախ պատմական հետեւութիւնը, որով մէնք որոշում ենք որ և է դէպքի պատճառը, մի աւելի բան չէ, քան փաստի փոխարինումը նրա գենետիկական (ծագողական) բանաձեռով, որ՝ առաջանալով պատճառական բացարմութեան համար մէր ուսնեցած պահանջների ազգեցութեան տակ, իսկապէս նոր բան չի տալիս: Այսպէս օրինակ մէնք բացարում ենք զօրավարի յաղթանակը նրա սազմակիտական տաղանդով, իսկ այն մասին, որ նա աչքի ընկնող զօրավար էր մէնք իմանում ենք միայն նրա յաղթութեան փաստից: Որ Մոլոկն հանձարեղ զօրավար էր, ապացուցուեց առաջին անգամ 1866 թ. պատերազմում: Առաջ նոյն իսկ նրա մօտիկ անձնաւորութիւնները կարող էին միայն գուշակել, որովհետեւ զօրավարի հանձարը արտայատում է միայն գործնականում և ոչ թէ տեսականում: Նոյնը կարելի է ասել նաև ինչպէս բոլոր անհատների, նոյնապէս էլ ամբողջ ժողովուրդների ընութագրի մասին, այն ինչ որ առանձին դէպքերում ըմբռնում ենք որպէս

գործողութիւն, մենք վերագրում ենք պատճառին (անհամակամ կամ ժողովորդի բնաւորութիւնը) և արդէն նրանով բացատրում ենք առանձին արարմունքները:

Այդ պատճառով մոտիւների հետազօտումը և հոգեբանական վերլուծութիւնը երբէք չեն կարող պատմագիտութեան գլխաւոր ինդիրը լինել. նրանք միշտ հասնում են մինչև իմանալիութեան սահմանները և յաճախ էլ գուրս են գալիս այդ սահմաններից: Պատմագիտութեան հիմքը միշտ փառաւ երը կը մնան, այսինքն այն, ինչ որ լէալ կերպով ըմբռնելի է, տուեալ գէպքում հէնց կամքի ակար. (օրինակ Վեստմինիստրեան դաշնագրութիւնը շատ կարեոր փաստ է, ինչ էլ որ կը լինեն շարժառիթները) մնացածը, ինչքան էլ որ նշանաւոր լինի, իւր բոլոր նշանակութեամբ յետ է մղում արդէն, որպէս աւելի պակաս կարեոր:

Պատմական եղանակացութեան այլպիսի առեղծուածային դրութեան պատճառով իւրաքանչիւր պատմահայեցողութեան մէջ անխուսափելիօրէն գոյութիւն ունի ոռւյը էկտիւ տարր, որին երբէք չի կարելի մեկուսացնել. միայն շնորհիւ պատմական գնահատութեան է, որ բաժանուում է միաժամանակ տեղի ունեցած փաստերից որ և է եզակ ի փաստը, որ և գառնում է պատմական գէպք: Պրոբլեմները, որոնցով պատմաբանը մօտենում է փաստին, նա հանում է իւր «ես»-ից: Նրանք ծառայում են որպէս ուղեցոյցներ, որոնց օգնութեամբ նա համեմատում է, խմբակցում է փաստերը, քննում է պատմական մոմենտները և այդ պրոբլեմները վճռելու համար անում է իւր պատմական հետեւութիւնները:

Պատմաբանի անհատականութիւնը և նրան ժամանակակից շրջանի իդէաների աշխարհը հանդիսանում են այնպիսի մոմենտներ, որոնք չեն կարող մեկուսանալ ոչ մի պատմայեցողութիւնից: Վերջի վերջոյ պատմութեան ամին մի ըմբռնում կը լինի միայն մեր

ըմբռնումը և երբէք մենք չենք հասնիլ բացարձակին, մի անգամ ընդունուած չափանշին: Այս վերջին հետեւութիւնը կարող է թուալ կասկածելի, բայց հարկաւոր է խոսառականել, որ էապէս գործը ուրիշ կերպ չի դասաւորած նաև բնական գիտութիւնների և ընդհանրապէս մարդկային գիտութեան բոլոր սահմանների մէջ: Ամեն մի իմացութեան մէջ առաջնակարգ փաստը հանդիսանում է իմացող, գիտակցող սուբյէկտը:

Վերջացնելով այս ինդիրը ես կը ցանկայի համառօտակի շօշափել գարձեալ չորս կէտեր, որոնք կօգնեն մեղ քննութեան ենթարկած խնդիրները ուղղիղ հայեցակէտի վրայ զնելու:

1. Վերե ես արդէն ցոյն տուի, որ պատմութեան ոյժի կենտրոնը ընկնում է եզակի փաստեր երի վրայ, և որ ընդհակառակին ընդհանուր գործօնները (և այդ գործօնները ուսումնասիրող գիտութիւնը) լոկ ենթագրում են պատմութեան կողմից որպէս տուեաներ, չկազմելով նրա ուսումնասիրութեան իսկական առարկան:

Ի հարկէ ընդհանուր պայմանները խաղում են մարդու կեանքում, հետեւապէս և պատմութեան մէջ, մեծ դեր, բայց իրենք պատմական ուսումնասիրութեան առարկաներ չեն: Նրանք պատմութեան առարկայ կը դառնան միայն այն ժամանակ, երբ կարտայայտուեն եղակի փաստերի մէջ. չնորհիւ գրան կը ստանան անհատական գունդու ուրում և այդ ձեռվ կը մտնեն պատմական կեանքի միւս անհատական գործօնների հետ փոխազգեցութեան և կոուի մէջ: Այդ կոուի և հականերգործման մէջ է պատմական զարգացման ամբողջ պրոցէսը:

Ընդհանուր պայմանների ազգեցութիւնը էապէս բացասական է աւելի ճիշտ ասած սահմանափակող, նա գնում է սահմաններ, որոնց մէջ պարունակում են եղակի արտայայտութիւնների անթիւ հնարաւորութիւն-

ներ: Այդ հնարաւորութիւններից որոնք արդեօք իրականութիւն կը դասնան, այսինքն կը լինեն պատմական իրողութիւն, դա կախուած է պատմական ոլրոցէսսի բարձր, անհատական գործօններից:

Պատմական էվլիւցիայի վրայ մեծ ազդեցութիւն թողնող այս անհատական գործօնների վերաբերմամբ, ևս ցանկանում եմ ուշադրութիւն դարձնել նաև այնպիսի երևոյթների մի կատեգորիայի վրայ, որոնք իմ կարծիքով աւելի լաւ է անոււանել անկատար մնացած պատմական փաստեր, ինչքան էլ որ խորթինի առաջն հայեացքից այս տերմինը: Սրանով ևս որակում եմ այն դէպեհը, երբ որ և է իրողութիւն, որի առաջացումը կարելի էր սպասել բոլոր տուեալներով չիրականացաւ, որը իւր հերթին կարեոր հետևանքների հասցըից, օրինակ երբ որ և է դարաշրջան չի ստեղծում աչքի ընկնող անհատ, որի կարիքը այդ ժամանակ շատ է զգացում. և կամ աւելի փայլուն օրինակ. Հաբսբուրգների հակայ տիրապետութեան մէջ, որ պարփակում է բացի Աւստրիայից, Աւնգարիայից և Բոհեմիայից նաև Բուրգունդիան և Սպանիան իւր իտալական կալուածներով, չնորհիւ Փիլիպոս Բ. Սպանացու պատկի Մարիա Անդիացու հետ՝ պէտք է մտնէր և Անդիան: Բայց այդ ծրագիրը պարտութիւն կրեց կարելի է ասել հէնց սկզբում, որովհետեւ նրանց ամուսնութիւնը անդաւակ մնայ: Սպասուած երեխան լոյս աշխարհ չեկաւ և զրա հետևանքն այն եղաւ, որ Եղիսաբէթը բարձրացաւ Անդիական դահը, որի օրով և առաջ եկաւ Անդիայի անխուսափելի բաժանումն պապութիւնից և այդ երկիրը դարձաւ բոլոքական: Իսկ թէ այդ հանդամանքը ինչ մեծ նշանակութիւն ոււնեցաւ իւր հերթին համաշխարհային պատմութեան համար, դա այնքան յայտնի է, որ զրա վրայ չարժէ ծանրանալ:

2. Միանդամայն ճիշտ է այն հայեացքը, որ պատ-

մական ինտերեսը պէտք է ուղղուած լինի բացառապէս կուլտուրա և կան ժողովութիւն եր ի ուսումնասիրութեան և որ վերջիններս այնքան հետաքրքիր են պատմաբանի համար, որքան բարձր են կանգնած քաղաքակրութութեան աստիճանի վրայ: Դա առաջանում է այն հանգամանքից, որ կուլտուրական ժողովուրդներն ունեցել են և շարունակում են ունենալ անհամեմատ աւելի ուժեղ ազդեցութիւն մարդկութեան վրայ, քան անկուլտուր ժողովուրդները: Մենք գիտենք շատ փաստեր նախնական ժողովուրդների թէ արտաքին և թէ ներքին կեանքից. օրինակ թէկուզ մի քանի նեղը ցեղերի մասին, բայց այս ժողովուրդները հետաքրքրում են մեզ զուտ մարդաբանական տեսակէտից և զբեթէ մեր մէջ ոչ մի պատմական հետաքրքրութիւն չեն զարթիցնում, որովհետեւ պատմութեան մէջ ներգործող գործօն չեն: Բայց երբ նրանք շնորհեւ որ և է պատահմունքի հետաքրքրութիւն զարթիցնեն, օրինակ երբ նրանք նուաճողական նպատակներով մտնեն կուլտուրական ժողովուրդների սահմանը, ինչպէս այդ արին հոնները և մոնղոլները, այդ դէպեհում դառնում են մեզ համար պատմական ինտերեսի առարկայ կուլտուրական ժողովուրդների շարքում:

3. Կենցաղական պայմանները կարող են լինել պատմութեան առարկայ միտյն այն չափով, ինչ չափով որ նրանք ազգեցութիւն են գործում: Այս օրէնքը իւր ուժը պահում է կուլտուրայի բոլոր արտադրութիւնների նկատմամբ, որոնք երկար են ապրում օրինակ գեղարվեստական երկերի, գիտութիւնների և այլ արտագրսւթիւնների նկատմամբ: Այստեղ պատմաբանին հետաքրքրում է միշտ միայն մի կողմը, յատկապէս այն, որ ներկայանում է նրան պատմականօրէն ազդող: Պատմաբանը երբէք չի կարող (լինի դա նոյն իսկ գրականութեան կամ գեղարվեստի պատմութիւն) բազմակողմանի և վերջնականօրէն բացատրել ֆառւ-

տինու Պլատոնին, կամ Սիկստինեան կապելլայի նկարները, ինչպիսի կարևոր, բացարձակ նշանակութիւն էլ որ չփերազրուէքը դրանց։ Ճիշտ նոյնը կարելի է ասել պատմաբանի յարաբերութեան մատին նուև դէպի ամբողջ կուլտուրան, պետ ու թիւնը և այլն։ Այսպէս պատմութեան մէջ տեղ չունեն պետական իրաւունքի սիստեմները, բազմաթիւ հաստատութիւններ, որոնք անխուսափելիօրէն ձևակերպւում են սիստեմատիկ կերպով (օրինակ որոշ պարտականութիւններ), պատմաբանը պարտական չէ հաշուի առնել այս բոլորը, որովհետեւ նրանք ոչ մի պատմական ազդեցութիւն չունեն։ Միւս կողմից նա երբեմն ստիպուած է կանգ առնել որ և է մանրամասնութեան վրայ, որ միստեմի տեսակէտից միայն երկրորդական նշանակութիւն ունի, բայց հանդիսացել է պատմութեան մէջ ներգործող ոյժ, ուստի անհրաժեշտ է դառնում նրա հետ ծանօթանալը, հատկանալու համար պատմաբանի հետազութեան ենթակայ դէպքերը։

Ես երկար ժամանակ այն հայեացքն եմ ունեցել, որ փաստերի ընտրութեան դէպքում պէտք է կանգ առնել բնորոշի, եղակիի վրայ, ուշադրութիւն դարձնելով միայն այն բանին ինչով օրինակ որ և է հաստատութիւն կամ անհատ տարբերում է միւսներից։ Դա, յիրաւի, անվիճելի է, բայց կարօտ է բացատրութեան։ Բնորոշ գծերը պատմութեան համար նշանակութիւն ունեն բացառապէս այնքան, որքան մենք կարող ենք նրանց վրայ հիմնուելով հասկանալ կուլտուրայի, պետական կազմի, ժողովուրդի, անհատի առանձնայատկութիւնները և դրա համար նրանք պատմաբանի ձեռքում ծառայում են որպէս միջոց թուած գործոնների, պատմական ազդեցութեան լրիւ բացատրութեան համար։

4. Ես արդէն բաւականաչափ բացատրեցի, որ մասսայական երևոյթները ենթադրուում են պատմու-

թիւնից որպէս տուեալներ և որ ընդհանուր պայմանները ի նկատի են առնւում միայն այնքան, որքան նրանք հարկաւոր են եղակի գործոնների բացատրութեան համար։ Նոյնը կարելի է ասել նաև անհատական մոմենտների մասին։ Նրանք հետաքրքրում են պատմաբանին ոչ թէ իրենք իրենց և ոչ էլ իրանց բոլոր կողմերով, այլ միայն այն բանով ինչ որ նրանց մէջ պատմական է։

Այստեղ մենք մօտեցանք անհատի նշանակութեան մէջ։ Այդ հարցը սովորաբար սկզբ է դրում, և ես ինքս ստիպուած եմ հրաժարուել իմ նախկին ձևակերպումից։ Պատմութեան մէջ յիշատակուած բազմաթիւ դէմքերից խսկապէս միայն շատ քչերը կարող են ի նկատի առնուել որպէս անհատներ, ինդիվիդներ։ մեծամասնութիւնը նրանցից միայն մասսաներից դուրս եկած դէմքեր են, և նրանց անունը յիշատակուում է բացառապէս այն պատմառով որ նրանք պատմամամբ միայն մասնակից են եղել որ և է պատմական դէպքի, որպէս սպաներ, դեսպաններ, աստիճանաւորներ և այլն։ Այս պատճառով պատմաբանի համար նշանակութիւն ունի միայն նրանց գործունէութիւնը և մասնակցութիւնը այդ դէպքերում և ոչ այն անհատական յատկութիւնները, որոնցով նրանք տարբերուում են միւս մարդկանցից։

Նրանց հետ, խսկապէս, կան նաև այնպիսի անհատներ, որոնք ազդել են պատմութեան վրայ հէսց իրենց անհատականութեամբ, ինքն ու ոյն ու վթեամբ, կամ քի ակտերի ազատութեամբ։ այնպէս որ այն դէպքերը, որոնց մէջ նրանք մասնակցութիւն են ունեցել բոլորին այլ ընթացք կը ստանային, եթէ նրանց ունեղը եւրիշ մարդիկ լինէին ինք ըստ ինքեան հասկանալի է, որ այսպիսի դէպքերում չի կարելի անցնել առանց այդ անհատների ընաւորութիւնը և գործունէութիւնը խոր անալիգի ենթարկելու բայց նոյն իսկ այստեղ պատ-

մարանի. համար հետաքրքիր է միայն այն, ինչ որ ունեցել է պատմական ազդեցութիւններ իմանանք այս մարդկանց կեանքից, ինչքան էլ այս մանրամասնութիւնները ըստ ինքեան հետաքրքիր լինին, նրանք այլևս չեն վերաբերուամ ութեամբ և այդ պատճառով էլ պէտք է առողջապես պատմութեամբ մատնուեն:

Այսպիսի անհատների պատմական նշանակութեամբ հարցը սովորաբար պատարացուում է այն ձևով, թէ մարդիկ ինչ գեր ունեն պատմութեան մէջ: Հարցի այդ եղանակով դնելը սկսալ է և միայն խճճում է բանը: «Մէծ մարդիկ այս բառի իսկական իմաստով՝ այսինքն ազնափախները, որպաց մաքերը և արարմունքները ունենում են, իրենց ստեղծագործող ոյժը դարերի և հաղորդականիների ընթացքում, պատմութեան աշքի ընկանող գործիչների մէջ շատ քիչ են և ընդհատակն շատ աշքի ընկնող մտքեր կարող էին ոչ մի ազդեցութիւն չունենալ պատմութեան վրայ, և շատ կարելի է, որ մեզ չի հասել նոյն իսկ նրանց մասին ոչ մի տեղեկութիւն: Իրաւունք ունենք արդիօք պնդելու, որ անցեալ դարում Գերմանիայում չկաց այնպիսի մարդի, որ գերազանցել կարողանար Եիսմարկին, եթէ հնարաւորութիւն ունենար գործելու քաղաքական տապարիզում, կամ այնպիսին, որ վնէր աւելի աշքի ընկնող գորավաց քան Մոլտկին: Որ մենք այս երկու գործիչների մասին ունենք տեղեկութիւն, որ նրանք դարձան պատմական անձնաւորութիւններ, բացատրուամ է բացառապէս այն բանով, որ քաղաքական դէպքերը նրանց հնարաւորութիւն տուեցին գործելու: Ինչպէս յայտնի է, Բիսմարկի ամբողջ քաղաքական գործունէութեանը զարկ տուեց այն պատմական պարագան, որ նա դուրս եկաւ միացեալ լանդուագում որպէս անձնափուլանորդ հիւմանդացած պատգամաւորի:

Ամենաուժեղ և ամենաշատ ուշադրութիւն գրաւող

պատմական անձերը հանդիսանուած են ի հարկէ մեծ և ան և ընելը: Բայց պատմական ազդեցութեան տեսակէտից նրանք պէտք է որոշ չափով գիշեն այն անհատներին, որոնք իրենց մտաւոր զարդացմամբ չեն կարող համեմատուել նրանց հետ: Այս պէտք օրինակ նոր պատմութեան մէջ դժուար թէ որ և մէկը իւր մեծ նշանակութեամբ կարողանայ համեմատուել ֆրիդրիխ Վիլհելմ Անդի հետ, որն ի հարկէ շատ հեռու էր հանճար լինելուց: Ամենից աւելի նրա անհատականութիւնն է սերտօբէն կապուած Պրուսիայի թագաւորութեան հիմնաւորման և քարձրացման հետ: Առանց նրան անհասկանալի կը լինէր ֆրիդրիխ Մեծ, իսկ Մեծ Կուրֆուրստը կը լինէր լոկ անցողական մի երկոյթ: Նրա նշանակութիւնը միանդամայն իրաւացի կերպով աւելի բարձրացնում է, որովհետև Պրուսիայի և Գերմանիայի աճման հետ շարունակում է աճել և նրա պատմական ազդեցութիւնը:

Ամբողջ պատմութեան մէջ դժուար գտնուի մի ուրիշ անձնաւորութիւն, որ իւր գործունէութեան ծաւալով և նշանակութեամբ կարողանար հաւասարուել Օգոստոսին: Կեսարն անսովոր մտքի աւէր մարդ էր, բայց եթէ համեմատելու լինենք նրա պատմական ազդեցութիւնը իւր որդեգրի ազդեցութեան հետ, միայն վաղանցուկ մի բան կը թուայ նա: Օգոստոսի հռոմէական պետութեան տուած կազմակերպութիւնը այն մունքնում, երբ աշխարհը յաղթուած, պառկած էր նրա ուսների տակ, ոչ միայն հրմք ծառանյեց հին աշխարհի յետադայ զարգացման ամբողջ դարերը շարունակ, այլ և նրա նշանակութիւնը զիացւում է մեր օրերում: Օրինակ այն բանում, որ գոյութիւն ունի կերմանական լիդու, և լոմանական ժողովութիւնների կողքին կանգնած են գերմանական ժողովութիւններ, արսնով մենք պարտական ենք այն բանին, որ Օգոստոսի կազմակերպութեան ժամանակ անկարելի դարձաւ նույաղական

պատերազմը այն չափերով, ինչքան դա հարկաւոր էր գերմանացիներին Հռոմի տիրապետութեանն ենթարկելու: Թէպէտ այդ ակտը թիւագրում էին Օգոստոսին այն ժամանակի պարագաները, բայց և այնպէս այդ նրա անհատականութեան ազատ արդիւնքն էր: Կեսարը նոյնպիսի պարագաներում կանգ կառնէր որ և է ուրիշ որոշման վրայ, մինչդեռ Օգոստոսը իւր սեփական կամքով հեռացրեց այն կազմակերպութիւնը, որ կեսարը ցանկանում էր տալ Հռոմէական կայսրութեան:

Բայց բոլորովին աննշան անձնաւորութիւններն էլ կարող են շատ մեծ պատմական ազգեցութիւն ունենալ, օրինակ Լիւդովիկոս XV-րդ կամ Կարլոս II-րդ Անգլիացին, այդպիսիների ցանկը կարելի է շարունակել որքան ուղինաք:

Ասածներից երեսում է, որ խօսքն իսկապէս ոչ թէ անհատների և նրանց գնահատութեան բացարձակ նշանակութեան մասին է, այլ այն մասին, որ այս կամ այն դէմքը շնորհիւ մի քանի պատահական հանգամանքներ՝ ծագման, ընտրութեան և այլն, ընկնում է այնպիսի դրութեան մէջ, որտեղ նա դառնում է պատմական պրոցեսի կարեռը ազդեցիկ գործոն:

Այսիդ ծագում է մի ուրիշ հարց, անհատի պատմական ազդեցութեան սահմանների մասին: Որ վերջինիս գործունէութիւնը պայմանաւորուած է ընդհանուր գործօններով, որոնք մարդու կեանքում, հետեւապէս և պատմութեան մէջ, ահագին դեր են խաղում, այդ անկասկած է: Եթէ հին թէորետիկները, գլխաւորապէս Սոկրատեանները և նրանց ժամանակակից հետեւողները երևակայում էին, որ իշխանութիւն, խելք, տաղանդ ունեցող օրէնսդիրը կարող է հիմնական յեղաշրջում առաջացնել համաքաղաքացիների մտքի և կեանքի մէջ, դա ի հարկէ, ուստո-

պիա է: Յայց միւս կողմից օրինակ այն բանի, թէ ինչ ազգեցութիւն կարող է ունենալ եղակի անձնաւորութիւնը ամբողջ մասսաների կեանքի և մտքի վրայ սերունդների երկար շարքում, կարող են ծառայել կրօնների հիմնադիրները և կրօնական բարենորոգիչները: Կարելի էր մատնացոյց անել նաև Բիսմարկի վրայ, "որ ինչպէս յայտնի է, կանգնեցրեց լիբերիալիզմի յառաջնաղացութիւնը, որ պատրաստ էր տօնելու իւր յաղթանակը, և դարձրեց իւր հայրենակիցներից մեծամասնութեանը բոլորովին այլ քաղաքական դաւանանքների":

Եւ ընդհակառակն մենք յաճախ տեսնում ենք ինչպէս աչքի ընկնող մարդիկ ուժից դուրս են գալիս ունայն ձգտութեանով իրականացնելու իրենց հայեցքները, կամ, խօսելով սովորական արտայացութեամբ, փոխելու պատմական օրհասական ընթացքը: Երկու մեծագոյն անձնաւորութիւններ Պրինցի պատի դարեցքանի հոսմէական կայսրների մէջ Տիբերիոսը և Սորբիանոս ուժապատեղ եղան այդպիսի պատերազմում և վերջն էլ լիւակատար յուսահատութեան մէջ ընկան: Աչքի ընկնող ձիրքերի տէր Արդուլլա Խալիֆան, որ վերին աստիճանի տաղանդաւոր մարդ էր, պատկանում էր այն մարդկանց թուին, որոնցից նպաստաւոր պայմաններում առաջ են գալիս պետութեան մեծ հիմնադիրներ, (ևս գասում եմ նրան աւելի բարձր քան ֆրանկների թագաւոր Խոնզիկին) հասնելով մեծաշուղութիւնների վերջի վերջոյ այսուամենայնիւ պարտութիւն կրեց, որովհետեւ եւրոպական կուլտուրայի զօրութիւնը նրա յարատե գիմադրութիւնը ուժապատարեց:

Այսպիսի բախտի արժանացան ՏΙΧ-րդ դարի առաջին կիսում նաև Վազարիտները, իրենց ցեղակիցների մէջ այս կրօնական բարենորոգիչները հասն մեծ յաջողութեան, ընդհակառակն Պարսկաստանում Բարիի առաջացրած կօրնական շարժումը չնայած այն

յոյսէրին, որ սկզբում նա տալիս էր, պարտութիւն կրեց և այժմ էլ գեռ շարունակում է ապրել որպէս աղանդ:

Եւ այստեղ նոյնպէս, ի հարէ, ոչ մի հնարաւորութիւն չկայ բազմաթիւ առանձին փաստերը դնելու ընդհանուր բանաձևի տակ, որովհետև իւրաքանչիւր դէպքում վճռող նշանակութիւն ունեն առանձին պայմանները, իրար մէջ կուռզ ուժերի յարաբերութիւնը, անշարժութեան ոյժը, տրագիսիայի և մասսայական պայմանների ոյժը մի կողմից, հակումն դէպի փոփոխութիւնը, նորութիւնը անհատական ոյժը միւս կողմից: Դրա մէջն է ահա դարաշը ջանների տարրերութիւնը: Անհատական սկզբունքը ոյժ է ստանում արագ, ուժգին զարգացման դարաշը անդհական բարձրացները, որոնք առաջնում են սովորաբար հոգեկան մտաւոր կեանքի յետամնացութիւն, անհատականութեան դէմ զնում են միշտ ուժեղ խոչընդուներ և վճռական նշանակութիւնն անցնում է կեանքի ուրիշ գործօններին:

Առաջնմ բերում այստեղ Ռոռնի խօսքերը նրա 1864 թ. 27 յուլիսի Պերտէսին գրած նամակից, Դանիայի հետ խաղաղութիւն կապելուց անմիջապէս առաջ: Ռոռնը տալիս է այնպիսի ցայտուն բանաձև ոչ միայն անհատի պատմական կեանքի միւս գործօնների հետ ունեցած յարաբերութեան մասին, այլ և պատմաբանի ճիշտ խնդիրների մասին, այնպէս որ դժուար կարելի լինի նրան աւելի յաջող բանաձեել: Նա գրում է. «Ինչ վերաբերում է իմ անձնական մասնակցութեանը դէպքերի մէջ, պէտք է ասեմ, որ նա այնքան էլ աննշան չէ եղել: Չնայած դրան ես էսպէս շատ քիչ բան եմ արել. մեծ մասը կատարուել է բազմատեսակ, յաճախ հակադիր ձգտումների և արարմունքների փոխազդեցութեան տակ, ինչպէս սովորաբար լինում է այն ամենի նկատմամբ, ինչ որ կատարուել է

պատմականութէն: Ճիշտ կերպով կազմել զուգահեռակողմը անկիւնագծի հիման վրայ, այսինքն այն ամենի հիման վրայ, ինչ որ կատարուել է և ճշգրիտ կերպով յայտնի է. զգալ և որոշել գործող ուժերի էութիւնն ու չափերը նոյն իսկ այնտեղ, որտեղ այդ ուժերը գեռ լիովին յայտնի չեն ահա թէ ինչ աշխատանք ունի պատմակն հանձարը, որը արտայատում է յօրինելու և կազմելու, բայց կոմպելիացիայի մէջ:



առաջնային մերու լորով ուղիղ ուժագութանայս  
համար ուրիշ պատճեն մասն պիրականին ու բարի  
լուսով առաջա և շատ լավ լավ մասն  
մասն առաջ ու առաջ լուսով լուսով ի լուս ու լուսով առ  
առ առաջ ու առաջ լուսով լուսով առաջ առ  
առ առաջ ու առաջ լուսով լուսով առաջ առ  
առ առաջ ու առաջ լուսով լուսով առաջ առ

### III

Բացի պատմականից գոյութիւն ունի նաև մի  
ուրիշ վերաբերմունք դէպի անցեալը, որին ևս նորա  
զլխաւորներկայացուցիչի համար կանուանէի ֆիլուս  
դիական: Ինչպէս յայտնի է, քիչ փորձեր չին եղել  
դնելու ֆիլոլոգիան և պատմութիւնը մի բանաձեկ տակ  
և ըստ կարելոյն նոյնացնելու նրանց: Բայց այդ փոր  
ձերը նրանց բաւարար հետեանքի չհացըբին: Որ նոր  
պատմութեան նկատմամբ այդ նոյնացումը հանդիսա  
նում է ուտոպիա, դա ակնյայտնի է: Բայց և նի վե  
րաբերմամբ պատմաբանի խնդիրները այլ են, քան  
կլասիկ ֆիլոլոգի խնդիրները. թէպէտ այս երկու գի  
տութիւնները շօշափում են շատ կողմիրով, (իւրա  
քանչիւրը նրանցից օժանդակ, կարեոր, գիտութիւն  
է միւսի համար) բայց և դարձեալ նրանք էապէս  
իրարից տարբեր են և նրանց միացումը մի ընդ  
հանուր գիտութիւն հսութեան մասին» (Altertumsw  
issenschaft) տերմինի տակ ոչ մի հիմք չունի, որով  
հետեւ առաջ է բերում միայն թիւրիմացութիւններ:  
Նա արդէն առաջ է բերել ոչ ցանկալի պատուղներ հին  
պատմութեան ուսումնասիրութեան մէջ, որովհետեւ  
նա էլ աւելի մեծացրեց բռնազրուիկ բաժանումն հետ  
զհետէ միմեանց կապակցուղ գիտական բաժինների  
մէջ և այն նրացած մասնագիտութիւնը, որով այնպէս  
պարծենում է մեր ժամանակը, ինչպէս կարող է պար-

ծենալ որ և է մարդ կամ ժողովուրդ իրեն թերութիւնն  
ներով: Հին պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի իաց  
եաւ, ընդհանուր պատմութիւնը այս մի մասը, այս  
չլպէտք է մոռանայ ոչ հին և ոչ էլ նոր պատմութիւնը:  
Ինչ վերաբերում է ֆիլոլոգիային, ըստ իս նրա էռ  
թիւնն ամենից լաւ կարելի է որոշել հետեւալ ձեռքի  
ֆիլոլոգիան ուսումնասիրում է և աշխատում է պատ  
կերացնել պատմական անցեալն այնպէս, որպէս թէ  
այդ անցեալը ներկայ լինի, այս ամենից առաջ վերա  
բերում է գրականութեան և գեղարուեատի երկերին,  
որոնք շարունակում են անմիջապէս ազգել ժամանա  
կակցութեան վրայ և այդ պատճառով էլ կարիք են  
գումար մի գիտութեան, որ դարձնէր նըանց հասկանալի  
ժամանակակցութեան համար: Բայց բոլորովին նման  
ձեռք մենք կարող ենք ուսումնասիրել լիզուն, պիտա  
կան և կրօնական հաստատութիւնները, սովորութիւնն  
ներն ու հայեացքները և վերջապէս որ և է էպոխայի  
ամբողջ կուտուրան, մի խօսքով այն, ինչ որ միաց  
ում է ընդհանուր «Հնութիւն» (Antiquitates) անուան  
տակ: Ֆիլոլոգիան չի ուսումնասիրում իւր օրյեկանները  
իրենց յաջորդական զարգացման մէջ, այլ կանդ է առ  
նում առանձին մոմեանների վրայ: Ուստի նրա մէջ ըն  
դարձակ տեղ կայ բազմակողմանի տեսութեան  
համար, լիսկատար մեկնութեան համար, որի  
մէջ չի կարող մանել պատմութիւնը, բայց որը կը լինի  
գլխաւոր խնդիրը ֆիլոլոգիայի:

Ֆիլոլոգիայի մէջ մտնում է նաև կենսագրու  
թիւնը. (Biographia) թէպէտ նա մեր ժամանակնե  
րում (այլ էր հին ժամանակ) գրեթէ բացառապէս  
գտնուում է պատմաբանների ձեռքին, բայց էտպէս իւր  
մեթոդով խիստ տարբերում է պատմութիւնից: Նրա  
առարկան է անհատն ինքն ըստ ինքեան, այլ ոչ իրեն  
պատմական ֆակտոր. վերջին հանգամանքը միայն  
հիմք է ծառայում, որի պատճառով և զրւում է որ և է

անհատի կենսագրութիւնը։ Ուստի նա մեծ բաժին է յատկացնում մանրամասնութիւններին, հերոսի ներքին և արտաքին կեանքի նկարագրութեան։ Այդ չի կարող անել պատմաբանը, միւս կողմից կենսագրութիւնը, եթէ նա խկազէս կենսագրութիւն է և ոչ թէ ամրող դարաշրջանը բնութագրելու մի պատրուակ, որի մէջ և ապրում է նկարագրուղ հերոսը, երբէք չի կարող հասնել այն բանին, ինչ որ կազմում է պատմական աշխատանքի խկական նպատակը, այսինքն երբէք չի կարող պատմական դէպքերի բազմակողմանի և վերջնական նկարագրութիւն լինել։

Ամփոփում եմ իմ ուսումնասիրութեան եղբակացութիւնները. ինչքան էլ որ աշխատեն կապելու պատմութեան վզին բոլորովին նոր բովանդակութիւն և նոր խնդիրներ տալու նրան, ինչքան էլ որ ժամանակի ընթացքում փոփոխութեան ենթարկուի պատմական ինտերեսի հետաքրքրութեան առարկան, միշտ կը մն այ պատմութեան միայն մի տիպ, պատմական պրոբլեմների հետազոտութեան մի մեթոդ, որի խկական և մինչև այժմ չը գերազանցուած տիպարը հանդիսանում է աթէնացի Թուլկի դիտէսք։



ուստի յաջունած ո՛ւ բարախ դասուակ խնդրու

ինդրու մասին յաջունած ո՛ւ բարախ մասունակ

### ԲՈՎԵՆԴՐԱԿՈՒԹԻՒՆ

Երես  
Խմբագրողից . . . . . 3.

#### I

Պատմութիւնը սիստեմատիկ դիտութիւն չէ	5.
Պատմական մեթոդ	5.
Պատմութեան փելիսոփայութիւն	7.
Նոր պատմական տեսութիւնները և նրանց հիմնական սկզբունքները	8.
Այդ տեսութիւնների քննադատութիւնը	10—46.
Ազատ կամք	10.
Պատահականութիւն	24.
Կոմպրոմիսի անհիմն լինելը	32.
Պատմութեան խկական խնդիրը	33.
Պատմական օրէնքների անկարելիութիւնը	36.
Նոր տեսութիւնների ծագումը	40.
Ազգայնութիւն	41.
Պատմութեան միութիւնը	46.


#### II

Պատմութեան սահմանումը	47.
Փաստերի որոշումը որպէս պամութեան հիմնական խնդիր	48.
Պատմութեան կախուածութիւնը պատմական նիւթի պատահականութիւնից	49.

Ինչպիսի փաստեր կարող են համարուել պատ-	
մական . . . . .	49.
Պատմական կարող են համարուել միայն այնպիսի	
փաստեր, որոնք արել են, կամ անում են ազ-	
գեցութիւն . . . . .	50.
Պատմական ինտերես . . . . .	50.
Քաղաքական պատմութեան գերակշիռ նշանակու-	
թիւնը . . . . .	52.
Եզրակացութիւններ նախկին խորհրդածութիւն-	
ներից . . . . .	53.
Պատմութեան առարկայ չեն կարող լինել ժամա-	
նակակից դէպքերը . . . . .	53.
Պատմական ուսումնասիրութիւնը գիմում է հե-	
տևանքից պատճառին . . . . .	54.
Պատմական իմացութեան սահմանները . . . . .	55.
Հոգեբանական գործօնները . . . . .	58.
Սուրեկտիւ էլեմենտը պատմագրութեան մէջ . .	60.
Եզակի փաստերը և ընդհանուր մոմենտերը . .	61.
Անկատար պատմութեան փաստեր . . . . .	62.
Կուլտուրական և անկուլտուր ժողովուրդներ .	62.
Պատմաբանի վերաբերմունքը դէպի կինցաղական	
պայմանները և կուլտուրան . . . . .	63.
Անհատական մոմենտներ. անհատի նշանակութիւնը	
պատմութեան մէջ . . . . .	65.

III

Ֆիլոգիա և պատմութիւն . . . . .	72.
Կենսագրութիւն . . . . .	73.
Եզրակացութիւն . . . . .	74.



Հայաստանի Սզբային գրադարան



NL0425900

18827

